Azg Ազգ

21 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2010 ՀԻՆԳՇԱԲԹԻ 192 (4572)

ISSN: 1829-1651

Բարեկամության տոն

ՖՈՏՈԼՈՒՐ



Հայաստանի վարչապետը, արտգործնախարարը, սփյուռքի նախարարը, Ամենայն հայոց հայրապետի ներկայացուցիչը, հայասանյան բոլոր ստեղծագործական միությունները, մի շարք վաստակավոր գործիչներ եւ այլք. նրանք բոլորը երեկ Սոչենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում էին, որտեղ Ռուսաստանի հայերի միությունը տոնում էր իր տասնամյակը:

Իր ելույթում ՌՀՄ նախագահ **Արա Աբրահամյանը** ներկայացրեց Միության ստեղծման պատմությունը, նպատակները, իրականացրած եւ ծրագրված նախաձեռնությունները. «Այսօր մենք մեծ կշիռ ունենք թե՛ Ռուսաստանում, թե՛ Հայաստանում. ռուսաստանյան տարբեր կուսակցություններ՝ ՌԴ-ում ընտրություններից առաջ, կարեւորելով մեր դիրքորոշումը, հանդիպումներ են կազմակերպում մեր տեղական եւ կենտրոնական մարմինների ղեկավարների հետ, իսկ ռուսասանաբնակ հայերը ամեն հարցով դիմում են մեր մարմիններին», նշեց Աբրահամյանը:

ՌՀՄ-ին իր եւ հանրապետության նախագահի անունից շնորհավորեց վարչապետ **Տիգրան Սարգսյանը՝** կրկին կարեւորելով Միության դերը Ռուսաստանի հայերի կյանքում, Ռուսասան-Հայասան գործակցությունում եւ այլն: Ամենայն հայոց կաթողիկոսի շնորհավորական ուղերձը հրապարակեց **Նաթան եպիսկոպոս Հովհաննիսյանը**. «Դուք բարեկամության կամուրջ եք ձգել հայ եւ ռուս ժողովուրդների միջեւ», ասված էր կաթողիկոսի ուղերձում: ՌՀՄ-ին շնորհավորեցին ստեղծագործական միությունների նախագահները, Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահը:

Միջոցառման համերգային մասում իրենց երաժշտական շնորհավորանքները արտահայտեցին օպերայի եւ բալետի ակադեմիական թատրոնի սիմֆոնիկ նվագախումբն ու երգչախումբը՝ մաեստրո Հովհաննես Չեփիջյանի ղեկավարությամբ, Հայաստանի պարի պետական ասամբլը, Ալթունյանի անվան երգի-պարի համույթը, տարբեր ստեղծագործական համույթներ, անհատ կատարողներ:

Օպերայի եւ բալետի ազգային թատրոնում երեկ Ռուսաստան-Հայաստան բարեկամության տոնն էր:

Հ. Ա.

ՄԱԿ-ը պատրաստ է նպաստել ԼՂՀ հարցի կարգավորմանը՝ երկխոսությամբ եւ խաղաղ ճանապարհով

«Մենք տարածաշրջանային շատ հակամարտություններ ունենք, որոնք պետք է կարգավորվեն երկխոսության միջոցով, խաղաղ ճանապարհով: Լեռնային Ղարաբաղը այդ խնդիրներից մեկն է, որը շարունակվում է արդեն երկար ժամանակ», Ստրասբուրգում հայտարարել է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար **Բան Կի Մունը** հոկտեմբերի 19-ին Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար Թյորբորն Յագլանդի հետ համատեղ ասուլիսում:

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի ներկայացմամբ՝ իրենք բաջալերող են Հայաստան-Թուրքիա առաջընթացը եւ որոշակի երկխոսությունը: Միեւնույն ժամանակ, ըստ Բան Կի Մունի, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներն էլ աշխատում են եռանդուն կերպով: «ՄԱԿ-ը եւս պատրաստական է նպաստելու Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորմանը երկխոսությամբ եւ խաղաղ ճանապարհով», ասել է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը, ըստ էության խոսք իսկ չասելով ՄԱԿ-ի շրջանակներում ղարաբաղյան հարցի կարգավորման հնարավորությունների մասին, իսկ թե նպաստել ասելով ի՞նչ է հասկանում Բան Կի Մունը՝ ենթադրությունների տեղիք է տալիս:

Ա. Հ.

Ռուսաստանը՝ Կովկասում

Ինչպես փոխանցում է «Ռեգնում» գործակալությունը, այսօր Մոսկվայում կմեկնարկի «Ռուսաստանի դերը Հարավային Կովկասում» միջազգային համաժողովը: Նույն աղբյուրից տեղեկանում ենք, որ համաժողովի ընթացքում կքննարկվեն՝ «Ռուսաստանի դերը Հարավային Կովկասում. ռազմավարություն, մարտահրավերներն ու հեռանկարները», «ԼՂ հակամարտության կարգավորում՝ հայացքներ Մոսկվայից, Երեւանից եւ Ստեփանակերտից» թեմաները: Համաժողովին կմասնակցեն քաղաքական եւ հասարակական գործիչներ Ռուսաստանից եւ Հայաստանից:

Հավելենք նաեւ, որ հոկտեմբերի 19-ին «Երեւան-Թբիլիս-Մոսկվա» տեսակամուրջի ընթացքում ռուսաստանյան «Ռազմավարական մշակույթ» հիմնադրամի փոխտնօրեն Անդրեյ Արեբեւն այս թեմայով նշեց. «Ժամանակն է, որ Մոսկվան հստակեցնի իր հարաբերությունները Կովկասի բոլոր՝ ճանաչված եւ չճանաչված հանրապետությունների հետ»:

Իսկ մոսկովյան համաժողովի կազմակերպիչներն են Հայ-ռուսական հարաբերությունների զարգացման տարածաշրջանային հասարակական շարժումը, Մոնիտորինգի եւ հեռանկարային ծրագրերի կենտրոնը եւ «Զառուբեժ-էքսպո» ընկերությունը:

Հ. Ա.

Թե ինչ կանի Սոբյանինը, երբ դառնա քաղաքպետ

Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւի որոշմամբ Մոսկվայի քաղաքպետի հիմնական թեկնածու Սերգեյ Սոբյանինը երեկ հանդիպել էր Մոսկվայի արհմիությունների ներկայացուցիչներին: Խոսելով քաղաքպետ դառնալու պարագայում իր առաջին քայլերի մասին՝ Սոբյանինը նշել է. «Մենք բոլորս պետք է աշխատենք հասնել այն բանին, որ մոսկովյան աշխատատեղերում աշխատեն բացառապես մոսկվացիները: Այդ աշխատատեղերը պետք է լինեն բարձր վարձատրվող: Մենք պետք է բարձրացնենք նաեւ մոսկվացիների պրոֆեսիոնալ որակները՝ դրանք համապատասխանեցնելով արդի մարտահրավերներին»:

Հ. Ա.

Նոյեմբերի սկզբին Մինսկի խմբի համանախագահները կլինեն տարածաշրջանում

Այս մասին տեղեկացնում է ադրբեջանական «ԱՊԱ»-ն՝ հավելելով, որ «միջնորդները կողմերին կներկայացնեն հաշվետվություն ԼՂ հարակից տարածքներում իրականացրած գնահատման առաքելության արդյունքների վերաբերյալ»: Ըստ ադրբեջանական գործակալության՝ նախատեսվում է, որ այցի ընթացքում միջնորդները կհանդիպեն նաեւ Հայաստանի ու Ադրբեջանի ղեկավարության հետ, կքննարկեն հակամարտության կարգավորման հարցեր:

Գործակալությունը ենթադրում է, որ համանախագահները կառաջարկեն կողմերի ԱԳ նախարարների հանդիպում կազմակերպել Ստրասբուրգում՝ նոյեմբերի 10-ին տեղի ունենալիք ԵԽ նախարարների կոմիտեի նստաշրջանի շրջանակում: Այն կունենա նախապատրաստական բնույթ՝ Աստանայում դեկտեմբերի 12-ին նախագահների հնարավոր հանդիպմանն ընդառաջ:

Հիշեցնենք, որ Աստանայում դեկտեմբերին կանցկացվի ԵԱՀԿ գագաթաժողով:

Հ. Ա.

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ

Էդվարդ Նալբանդյան. «Պատրաստ ենք ընթանալ առաջ, եթե Թուրքիան առանց նախապայմանների գնա հարաբերությունների կարգավորման»

«2011-ին հնարավո՞ր է, որ հայ-թուրքական արձանագրությունները խորհրդարանի մեծ օրակարգից դուրս բերվեն, եւ Հայաստանն իր ստորագրությունը հետ վերցնի այդ փաստաթղթերից»: Սա երեկ Ազգային ժողովում ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանին ուղղված «Ժառանգություն» խմբակցության անդամ Արմեն Մարտիրոսյանի հարցն էր:

«Մեր քայլերը կախված կլինեն ապագայում տեղի ունենալիք զարգացումներից», ասաց նախարարը՝ հիշեցնելով հայ-թուրքական խնդրում Հայաստանի դիրքորոշումը: «Բազմիցս հայտարարել ենք, որ պատրաստ ենք ընթանալ առաջ, եթե Թուրքիան նորից պատրաստ լինի առանց նախապայմանների գնալ հարաբերությունների կարգավորմանը», ասաց Նալբանդյանը:

Նախարարի բնորոշմամբ՝ հայ-թուրքական գործընթացը բավական բարդ էր, սակայն հայկական կողմն այն սկսելով միայն մեկ ցանկություն ուներ՝ կարգավորել հարաբերությունները:

Նալբանդյանը նշում է, որ հայկական կողմը հնարավոր բոլոր ջանքերը գործի դրեց գործընթացն առաջ մղելու համար՝ պայմանավորվածություններից մինչեւ արձանագրությունների ստորագրում: «Հայաստանը պատրաստ էր շարունակել գործընթացը, իրագործել կողմերի միջեւ ձեռք բերված պայմանավորվածությունները: Հայկական դիրքորոշումն այդ հարցում համահունչ էր միջազգային հանրության դիրքորոշմանը: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Պան Կի Մունը հայտարարեց, որ արձանագրությունները պետք է վավերացվեն առանց նախապայմանների, ու ողջամիտ ժամկետում իրականացվեն պայմանավորվածությունները: Նույն դիրքորոշումն ունեին նաեւ ԱՄՆ-ն, ԵՄ-ը եւ ՌԴ-ն»:

Նալբանդյանի գնահատմամբ՝ դիվանագիտական գործընթացի մեջ յուրաքանչյուր երկիր պետք է ունենա միջազգային հանրության աջակցությունը: Հայ-թուրքական գործունեության սկզբից մինչեւ արձանագրությունների վավերացման գործընթացի կատեգորիան Հայաստանն այդ աջակցությունն ուներ:

«ԱՄՆ-ի պետքարտուղարը Հայաստանում հայտարարեց այն, ինչ մենք ենք նշել՝ գնդակը գտնվում է թուրքական դաշտում, Հայաստանն անցել է իր ճանապարհը, հերթը Թուրքիայինն է: Պետք է քայլեր ձեռնարկել առաջ շարժվելու համար»:

ՀՀ ԱԳ նախարարը նշեց, որ հայ-թուրքական գործընթացով միջազգային հանրության համար Հայաստանը ըմբռնելի գործընկերոջ վարկանիշ ձեռք բերեց: Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցն էլ Հայաստանի արտաքին քաղաքականության կարեւոր եւ օրակարգային ուղղություններից է: «Ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի շարունակման ջատագովն ենք լինելու: Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացում թուրքական կողմին եւ հանրությանը հրապարակայնորեն հայտարարել ենք, որ Հայաստանը երբեք հարցականի տակ չի դնի Հայոց ցեղասպանության իրողությունը եւ դրա միջազգային ճանաչման կարեւորությունը»:

ՀԱՄՄԻԿ ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Գերմանիայի կոչը Թուրքիային՝ «ընդունել անցյալը եւ հաշտվել Հայաստանի հետ»

Գերմանիան աշխարհին եւ տարբեր երկրների հետ հարաբերություններին թերեւս միշտ նայել ու նայում է այն տեսանկյունով, որի դեպքում չի կարող հաշվի չառնել Երկրորդ համաշխարհային պատերազմի հետեւանքները հենց Գերմանիայի համար: Սա է թերեւս հիմնական այն անկյունաքարը, որ հիմք է տվել Գերմանիայի նախագահ **Քրիստիան Վուլֆին** Թուրքիային կոչ անել՝ «ընդունել իր անցյալը եւ հաշտվել հարեւան Հայաստանի հետ»:

Իսկ այսպիսի հայտարարությունը Գերմանիայի նախագահն արել է հոկտեմբերի 19-ին՝ ելույթ ունենալով Թուրքիայի խորհրդարանում: Նա խոսել է իրանական, կիպրական, հայկական հարցերի, Թուրքիայի եվրանդամակցության, այդ երկրում քրիստոնյա փոքրամասնությունների կարգավիճակի եւ մի շարք այլ խնդիրների մասին: Վուլֆը նշել է, որ Գերմանիան, կողմնակից լինելով Թուրքիայի եվրոինտեգրմանը, միեւնույն ժամանակ սպասում է, որ Անկարան կատարի հանձն առած պարտականությունները:

Գերմանական գործակալությունները տեղեկացնում են, որ նույն օրը Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլի հետ համատեղ ասուլիսում Վուլֆը նշել է հարեւան երկրների հետ հարաբերությունները կարգավորելու թուրքական ջանքերի մասին եւ քաջալերել է Թուրքիային՝ ձեռնարկելու Հայաստանի հետ հարաբերությունների նորմալացման քայլեր:

«Կարծում ենք, որ Կիպրոսի խնդրի լուծման անհրաժեշտություն կա: Դա ոչ միայն կղզու տնտեսական զարգացման տեսանկյունից է կարեւոր, այլեւ կնպաստի բարիդրացիական հարաբերությունների ձեւավորմանը: Ձեր երկրին հայտնում ենք մեր աջակցությունը նաեւ Հայաստանի հետ հարաբերությունների նորմալացման գործընթացում», ասել է Գերմանիայի նախագահը: Վուլֆը, խոսելով սահմանի բացման անհրաժեշտության մասին, միեւնույն ժամանակ, ակնարկով անդրադարձել է Հայոց ցեղասպանության խնդրին, նշելով. «Անհրաժեշտություն կա ձեւավորելու այնպիսի միջավայր, որտեղ չեն արհամարվի վիճահարույց հարցերը»:

Գերմանիայի նախագահը Թուրքիային հորդորել է հարգել իր երկրում բնակվող քրիստոնյա փոքրամասնությունների իրավունքները, ինչը Եվրոմիությանը անդամակցելու Թուրքիայի ճանապարհի առանցքային խնդիրներից է: «Մենք ակնկալում ենք, որ մահմեդական երկրներում քրիստոնյաները ունենան նույն իրավունքները՝ բացահայտ դավանելու իրենց կրոնը, կրթելու նոր հոգեւորականների եւ կառուցելու նոր եկեղեցիներ», Թուրքիայի խորհրդարանում հայտարարել է Քրիստիան Վուլֆը:

Ա. ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Գիտության ու նրա խնդիրների մասին խոսում են երիտասարդները

2011 թվականի փետրվարի 20-26-ը Երեւանի «Կոնգրես» հյուրանոցում Հայաստանի եւ աշխարհի տարբեր երկրներից եկած գիտնականները դասախոսություններ են կարդալու: Դասախոսությունները վերաբերելու են գենետիկական անկայունություններին՝ մուտացիաներին: Դասախոսությունների շարքի կազմակերպիչներն են Եվրոպայի կենսաֆիզիկոսների ասոցիացիաների ֆեդերացիան, «Երիտասարդ կենսաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը եւ ԵՊՀ-ն: «Երիտասարդ կենսաբանների ասոցիացիայի» անդամ **Հովակիմ Զաֆարյանը** նշեց, որ դասախոսությունների թեման ներկայումս շատ կարեւոր է. «Գենային անկայունությունը խաղկեղի առաջացման հիմնական պատճառներից է»: «Երիտասարդ կենսաբանների ասոցիացիայի» նախագահ **Արսեն Գասպարյանը** երեկ «Արմաս» ակումբում տեղեկացրեց, որ նմանատիպ դասախոսություններ Եվրոպայի տարբեր երկրներում ամեն տարի են կազմակերպվում: «Օրինակ՝ Հունաստանում այսպիսի միջոցառում տարեկան նույնիսկ մի քանի անգամ է կազմակերպվում», հավելեց Հովակիմ Զաֆարյանը: Դասախոսություններ կարդալու համար Հայաստան են գալու հանրահայտ գիտնականներ Իսպանիայից, Ճապոնիայից, Մեծ Բրիտանիայից եւ այլ երկրներից: Նրանց մեջ նաեւ հայազգի գիտնականներ են լինելու, նրանք հայտնի են աշխարհում, բայց, ցավոք, չեն պարում Հայաստանում: Բացի արտասահմանից եկած գիտնականներից՝ դասախոսություններին մասնակցություն կունենան նաեւ Հայաստանում պարող դասախոսները: Հովակիմ Զաֆարյանը տեղեկացրեց, որ երիտասարդ մասնակիցները գիտնականների հետ առանձին քննարկումների եւ զրույցների հնարավորություն կունենան: Բացի հայաստանցի երիտասարդներից՝ դասախոսությունների շարքին մասնակցելու են նաեւ արտասահմանցիներ, որոնք մասնակցության համար գումար են վճարելու, իսկ Հայաստանի երիտասարդներին այս հնարավորությունն ընձեռնվում է անվճար:

Մասնակիցների գրանցման վերջնաժամկետը նոյեմբերի 1-ն է: «Գրանցման առումով ավելի ակտիվ են արտերկրում, քան Հայաստանում», ասաց Ա. Գասպարյանը: Նմանատիպ միջոցառում Հայաստանում մեկ անգամ է կազմակերպվել: Դասախոսությունների տեւողությունը լինելու է 40 րոպե, 15 րոպե էլ հատկացվելու է քննարկումներին, որոնք վերաբերելու են մոլեկուլային կենսաբանությանը, գենետիկային եւ այլ հարցերի: Միջոցառման հովանավորը Երեւանի կոնյակի գործարանն է, ինֆորմացիոն գործընկերներն են «Երկիր մեդիա» հեռուստաընկերությունը, «Հետֆ» օնլայն թերթն ու Հանրային ռադիոյի «ԼյունՍե» երիտասարդական ծրագիրը: Ասուլիսի ընթացքում Արսեն Գասպարյանը նաեւ դժգոհեց, որ զանգվածային լրատվամիջոցներն այսօր քիչ են քննարկում գիտության հարցերը:

«**Ազգի**» հարցին՝ երիտասարդ բանախոսներն ինչքանով են տեսնում իրենց գիտության ոլորտում, երբ բոլորս էլ գիտենք, որ Հայաստանում գիտությունը «ոչ երանելի» վիճակում է, Հովակիմ Զաֆարյանը պատասխանեց. «Հիմա ես աշխատում եմ Գիտությունների ազգային ակադեմիայում եւ ստանում եմ 28 հազար դրամ աշխատավարձ: Երիտասարդ գիտնականի գիտական պրոդուկտը կառավարությունը գնահատում է 28 հազար դրամ: Ես, սակայն, չեմ կարծում, որ կառավարությունը մեր գիտությանը քիչ գումար է հատկացնում: Հատկացված գումարին համապատասխան գիտական ելք չկա»: Ա. Գասպարյանն էլ հավելեց, որ «գիտական պրոդուկտը» շուկայում եւ արտադրությունում հազվադեպ է ներդրվում:

«**Ազգի**» մյուս հարցին՝ արդյոք երիտասարդները համամի՞տ են այն կարծիքին, որ «Մեր գիտությունը բավականին ծերացել է», Ա. Գասպարյանը պատասխանեց, որ «Երիտասարդ կենսաբանների ասոցիացիան» պատրաստվում է առաջարկներ ներկայացնել Հանրային խորհրդին. «Առաջարկելու ենք ամեն տեղ պարտադիր դարձնել մինչեւ 35 տարեկան գիտաշխատողների տոկոսային շեմը, այսինքն՝ աշխատողների ընդհանուր թվականակի առնվազն 30 տոկոսը կազմեն մինչեւ 35 տարեկան գիտաշխատողները»: Ա. Գասպարյանի փոխանցմամբ՝ ակադեմիայի տարբեր ինստիտուտներում կա այդ «ծերացման» գործընթացը:

Հովակիմ Զաֆարյանն էլ հավելեց. «Ոչ ոք չի ասում, իսկ ո՞րն է գիտության «ծերանալու» իրական պատճառը: Իրական պատճառն այն է, որ երիտասարդ, լավագույն կադրերը տեսնում են, որ իրենց գիտական աշխատանքը արտասահմանում 20 անգամ ավելի բարձր արժեք ունի, քան Հայաստանում: Արդեն պարզ է, որ նրանք ամեն առիթ կօգտագործեն արտասահման մեկնելու համար:

«Երիտասարդ կենսաբանների ասոցիացիայի» նախագահը նաեւ խոսեց իրենց կազմակերպության մասին: «Երիտասարդ կենսաբանների ասոցիացիան» ստեղծվել է 2009 թվականի փետրվարին, արդեն շուրջ 110 անդամներ ունի: Կազմակերպության մեջ ընդգրկված են երիտասարդ գիտնականներ եւ ուսանողներ: «Մեր հիմնական նպատակներից է Հայաստանում նպաստել կենսաբանության եւ կենսագիտության զարգացմանը», ավելացրեց Արսեն Գասպարյանը:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հայ-ուկրաինական ռազմական համագործակցության պլան

Երեկ «**Ազգը**» տեղեկացրեց, որ ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը մեկնել է Ղրիմ՝ մասնակցելու ԱՊՀ երկրների պաշտպանության նախարարների խորհրդի նիստին: Այցի շրջանակներում Սեյրան Օհանյանը հանդիպել է իր ուկրաինացի պաշտոնակցի՝ Միխայիլ Եժելի հետ: Հայաստանի պաշտպանության նախարարության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչության փոխանցմամբ՝ նախարարներն անդրադարձել են երկու պետությունների պաշտպանության նախարարությունների հարաբերություններին, դրանց ծավալման եւ ակտիվացման ուղիներին:

Հանդիպման ավարտին ստորագրվել է «Հայաստանի եւ Ուկրաինայի պաշտպանության նախարարությունների երկկողմ համագործակցության 2011 թվականի պլանը», որի կարեւոր միջոցառումներից են ռազմավարական եւ օպերատիվ պլանավորման խորհրդակցությունները, համագործակցությունը ինժեներական եւ ռազմակրթական ոլորտներում:

Սեյրան Օհանյանը Ղրիմում երկկողմ հանդիպումներ է ունեցել նաեւ ԱՊՀ-ի երկրների պաշտպանության նախարարների հետ, որոնց ընթացքում քննարկվել են ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցեր:

Հ. Ա.

«Ժանդարմը»՝ նոր վեպ Հայոց ցեղասպանության մասին ԱՄՆ-ում

The New York Times-ը տեղեկացնում է, որ ԱՄՆ-ում լույս է տեսել հայազգի ամերիկացի գրող եւ իրավաբան Մարկ Թ. Մուսայանի «Ժանդարմը» (The Gendarme) վեպը, որը պատմում է Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Օսմանյան Թուրքիայում իրականացված Հայոց ցեղասպանության մասին:

Panorama.am-ը՝ հղում անելով The New York Times-ին, փոխանցում է, որ վեպում միահյուսվել են ներկան ու անցյալը: Վեպի գլխավոր հերոսը՝ ժանդարմը (ասկյար) 92-ամյա թուրք Էմմեթ Քոնն է, որը ծնվել է Օսմանյան Թուրքիայում, սակայն Թուրքիայի տարածքում գտնվող Գալիփոլլի թերակղզում տեղի ունեցած հայտնի ճակատամարտում վիրավորվելուց հետո սխալմամբ տեղափոխվել է բրիտանական հոսպիտալ: Քոնն աղաչինվում է, սակայն մասամբ կորցնում է հիշողությունը, նա ամուսնանում է ամերիկացի մի բուժքրոջ հետ եւ մեկնում Միացյալ Նահանգներ:

Եվ ահա, տասնյակ տարիներ անց 92-ամյա Էմմեթ Քոնը տառապում է գլխուղեղի քաղցկեղից, գիշերային մղձավանջների տեսքով Քոնի գիտակցության մեջ սկսում են արթնանալ հիշողությունից դուրս մնացած իր կյանքի ահասարսուռ դրվագները: Էմմեթ Քոնն իրեն տեսնում է արյունարբու, դաժան 17-ամյա թուրք ժանդարմի կերպարում, որն անմարդկային տանջանքների է ենթարկում Թուրքիայից դեպի Սիրիա հարյուր հազարավոր քարավաններով բռնագաղթող հայերին: Նա տեսնում է, թե ինչպես ձիավոր մի թուրք ասկյար ձիու սմբակով ճզմում է հայ նորածին երեխայի գլուխը: Իր տեսիլքներում Քոնի կերպարանքով թուրք երիտասարդ ժանդարմը սիրահարվում է լուսավոր ու խորաթափանց աչքերով մի հայ աղջկա եւ այդ սիրո միջոցով փոխում իր վերաբերմունքը հայերի նկատմամբ:

Խոսելով Մուսայանի «Ժանդարմը» վեպի մասին՝ Հայոց ցեղասպանության մասին պատմող «Արարատ» ֆիլմի հեղինակ Ատոմ Էգոյանը նշել է. «Մուսայանը յուրահատուկ մի վեպ է գրել՝ ընդգրկելով 20-րդ դարի ամենաբարդ խնդիրներից մեկը, խնդիր, որն այսօր՝ 21-րդ դարում, շարունակում է սպառնալ մարդկությանը: «Ժանդարմը» ներկայացրել է, թե ինչ ահռելի ծավալներով չարիք կարող է պարունակել մարդկությունը, եւ ինչպիսի հետքեր է այդ չարիքը թողնում մարդկային ճակատագրերի վրա: Սա ողբերգական, ցավալի, բայց եւ ճշմարտացի վեպ է»:

Վեպի ավարտին 92-ամյա նախկին թուրք ժանդարմը եզրակացնում է, որ ինքն իր հիվանդության առաջ նույնքան միայնակ է, ինչպես հայերն էին՝ Թուրքիայից Սիրիա տանող մահվան ճանապարհին:

Հ. Ա.

ՀՕԳՈՒՏ ԱՐՑԱԽԻ ԲԱՐԳԱՎԱՃՄԱՆ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՐՈՅԻ ԿՈՉԸ

Սիրելի՛ հայրենակիցներ,

Արդեն սկսվել է «Հայաստան» համահայկական հիմնադրամի հերթական դրամահավաքը, որը նոյեմբերի 25-ին կեզրափակվի ԱՄՆ-ում հեռուստամարաթոնով:

Դրամահավաքի նպատակը այս անգամ եւս նույնն է՝ մասնակցել Արցախի բարգավաճմանը եւ տնտեսական վերելքին. ավելի ճշգրիտ՝ աջակցել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրամատակարարման ծրագրերին:

Արցախը ազատագրվեց արցախահայության ազատասեր մարտունակության եւ համայն հայության գործուն զորակցության շնորհիվ: Այսօր Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը իրողություն է. այն արժանի է մնալու հայության ուշադրության եւ գուրգուրանքի առարկան:

Մենք պարտավոր ենք կարելին ու անկարելին անել Արցախի համար: Պարտավոր ենք շենացնել, պաշտպանել վերջին դարերի մեր ամենամեծ հաղթանակի գրավականը: Յուրաքանչյուրիս պարտքն է կանգնել արցախահայության կողքին. հատկապես այսօր, երբ Արցախի հարցի խաղաղական լուծումը դեռեւս դժվար բանակցությունների առարկա է:

Հետեւաբար՝ Արցախին տրված որեւէ նյութական օժանդակություն նաեւ խաղաղական իմաստով բարոյական արժեք ունի: Այն համահայկական շարունակվող զորակցություն է Արցախի ազատագրության դատին:

Արցախը վերջնականապես ազատագրված կլինի, երբ ինքն իրեն կպարտադրի խաղաղական միջազգային ընտանիքին՝ իբրեւ պետական անկախ միավոր: Այդ նպատակին հասնելու համար կարեւոր է համայն հայության արթնամտությունն ու նրա կարողականության նպատակասլաց գործածությունը:

Այս է պատճառը, որ այս հերթական դրամահավաքի ընթացքում հավաքված գումարի չափից ավելին կարեւոր է դրամահավաքին մասնակցողների թիվը՝ իբրեւ աղացույց հայության միասնական կամքի:

Առ այդ՝ կոչ ենք ուղղում բոլորին՝ խուռներամ ու առատաձեռն մասնակցել համահայկական այս նախաձեռնությանը:

19 հոկտեմբեր, 2010թ.

Քվեարկության ժամանակ անձնագրում դրված կնիքը մի քանի օր անց կանհետանա

Փոփոխություններ ընտրական օրենսգրքում

ԱՐՏԱՏՊ

Վերջին համապետական ընտրություններից հետո մի շարք միջազգային դիտորդական կազմակերպություններ՝ ներառյալ ԵԱՀԿ ԺՄԻԳ-ը, Հայաստանին առաջարկներ են ներկայացրել ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարելու վերաբերյալ: Այդ առաջարկությունների հիման վրա կազմվել է «Ընտրական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» նախագծի աշխատանքային տարբերակը, որն ուղարկվել է Վենետիկի հանձնաժողովի փորձաքննությանը: ՀՀԿ պատգամավոր Հովհաննես Սահակյանի փոխանցմամբ՝ քվեարկության գաղտնիությունը ապահովելու համար քվեարկությունից հետո անձնագրում դրվող կնիքը մի քանի օր անց կանհետանա: Նախատեսվող փոփոխությունները կանդրադառնան նաեւ ընտրական ցուցակներում կանանց թվի քննային:

«ՀՀԿ-ն որոշում է ընդունել, որ ցուցակների առաջին տասնյակում պետք է պարտադիր մի կին թեկնածու ներկայացված լինի», ասաց նա:

Միջազգային կազմակերպությունների պահանջներից մեկն էլ վերաբերում է թեկնածուների կողմից քարոզարշավի ժամանակ լրատվամիջոցների հավասար օգտագործմանը: Մինչեւ նոյեմբերի 11-ը նախագծի վերաբերյալ տեղի կունենան քննարկումներ: Նախատեսվում են նաեւ հանրային լսումներ:

Ընտրական օրենսգրքում փոփոխությունների վերաբերյալ առաջարկություններ է ներկայացրել նաեւ ընդդիմությունը: Պատգամավորի խոսքով՝ դրանք հիմնականում վերաբերում են ընտրական հանձնաժողովների ձեւավորմանը: Ընդդիմության որոշ ներկայացուցիչներ պնդում են, որ ընտրությունների կազմակերպման եւ անցկացման պատասխանատվությունը պետք է կրի պետությունը, մյուս թեւի համոզմամբ՝ պատասխանատվությունը պետք է ընկնի քաղաքական ուժերի ուսերին:

Հ. Հ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ժԹ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետության 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի: Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Այսօրվա

2010-ի ամիսներին 2,8 տոկոս տնտեսական աճ

Սակայն երկնիշ աճ արդյունաբերության եւ էլեկտրաէներգիայի արտադրության ոլորտներում

Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության հրապարակած 2010-ի հունվար-սեպտեմբեր ամիսների օպերատիվ սոցիալ-տնտեսական ցուցանիշների համաձայն, Հայաստանի տնտեսական աճը կազմել է 2,8 տոկոս: Համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) կազմել է մոտ 2 տրիլիոն 386 մլրդ դրամ: Տնտեսական աճի տեմպը շարունակել է նվազել՝ հունվար-մայիս ամիսների 8,8 տոկոսից հասնելով 2,8 տոկոսի: Միաժամանակ, հարկ է նկատել, աճի նվազման տեմպը եւս փոքրացել է՝ հունվար-օգոստոսի նկատմամբ իջնելով ընդամենը 0,3 տոկոսային կետով: Այսինքն՝ տնտեսական աճի ցուցանիշը սկսում է կայունանալ 2-3 տոկոսի շրջակայքում:

Ինչպես բազմիցս ենք նշել, այս տարվա տնտեսական աճի ցուցանիշն այլ կլիներ, եթե ոչ բարենպաստ բնակլիմայական պայմանների հետեւանքով գյուղատնտեսության մեջ տեղի չունենար աննախադեպ անկումը: Դրան էլ հարկ է ավելացնել շինարարության ծավալների դեռեւս պահպանվող անկումը: Ընդ որում, շինարարության ծավալների որոշակի վերականգնումը պայմանավորված է հիմնականում պետական ֆինանսավորմամբ իրականացվող շինարարությամբ աղետի գոտում, ճանապարհների եւ ջրագծերի կառուցմամբ: Մասնավոր կառուցապատողների մեծ մասը դեռ սպասողական վիճակում է:

Ըստ տնտեսության ճյուղերի, հետեւյալ ցուցանիշներն են արձանագրվել: Արդյունաբերությունում շարունակվում է պահպանվել երկնիշ տնտեսական աճը, որն այս անգամ կազմել է 10,9 տոկոս: Էլեկտրաէներգիայի արտադրություն հունվար-սեպտեմբերին աճել է 19,4 տոկոսով: Հիմնականում արդյունաբերության մեջ արձանագրված աճի շնորհիվ է ընդհանուր տնտեսական աճ արձանագրվել, ինչը դրական պետք է համարել երկու պատճառներով: Նախ, որ իրական հատվածում է բարձր աճ արձանագրվում, ապա, որ դա վկայում է տնտեսության որոշակի դիվերսիֆիկացիայի մասին: Փաստորեն, չնայած գյուղատնտեսությունը եւ շինարարությունն անկում են արձանագրում, բայց այլ ճյուղերի, առավելապես արդյունաբերության, մասամբ նաեւ ծառայությունների շնորհիվ տնտեսական աճ, այնուամենայնիվ, արձանագրվում է: Իհարկե, դրան նպաստել են նաեւ համաշխարհային տնտեսության կացության բարելավումը եւ մեսաղների միջազգային գների բարձրացումը: Սակայն միայն սրանով բացատրել արդյունաբերության աճը ճիշտ չէ, քանի որ մեր հանքարդյունաբերական կոմբինատներին կառավարության կողմից անցյալ տարի տրամադրվել էր 40 մլն դոլարի վարկ, որը կարեւոր նշանակություն ունեցավ ճգնաժամային իրավիճակից նրանց դուրս գալու եւ հետագա գործունեության վերականգնման համար:

Շինարարությունում, ինչպես արդեն նշեցինք, անկում է արձանագրվել՝ 5,2 տոկոսով: Գյուղատնտեսության ոլորտում անկումը կազմել է 17,9 տոկոս: Այս ճյուղերի իրավիճակին արդեն վերեւում անդրադարձանք: Միայն ավելացնենք, որ սեպտեմբերին օգոստոսի նկատմամբ գյուղատնտեսությունում արձանագրվել է 28,3 տոկոս աճ, իսկ շինարարությունում՝ 19,9 տոկոս աճ:

Ծառայությունների ոլորտում այս տարվա հունվար-սեպտեմբերին արձանագրվել է 7,4 տոկոս աճ, իսկ սեպտեմբերին օգոստոսի նկատմամբ՝ 3,1 տոկոս աճ: Մանրածախ առեւտրում արձանագրվել է 0,4 տոկոս աճ, իսկ սեպտեմբերին օգոստոսի նկատմամբ 7,1 տոկոս աճ: Այս ճյուղերում արձանագրված ցուցանիշները արտացոլում են բնակչության կենսամակարդակի վիճակը: Միաժամանակ, հարկ է ավելացնել, որ աճի տեմպերն այստեղ ավելի բարձր կարող էին լինել, եթե ավելի ճշտորեն արձանագրվեր իրական պատկերը: Իսկ դրա համար հարկ էր գոնե պահպանել ՀԴՄ-ների կտրոնների բոնուսների համակարգը: Մինչդեռ, դրանց խորդանոցական դառնալուց հետո, այս ոլորտների շրջանառությունները դարձյալ սկսել են հեռանալ իրականությունից:

Միջին աշխատավարձը Հայաստանում բարձրացել է 7,9 տոկոսով եւ կազմել 106 հազար դրամ: Պետական հատվածում միջին աշխատավարձը կազմում է մոտ 85 հազար դրամ, իսկ մասնավորում՝ մոտ 133 հազար դրամ: Առաջինում աճը կազմել է 4,2 տոկոս, երկրորդում՝ 9,3 տոկոս: Ակհայտ է, սակայն, որ մասնավոր հատվածում միջին աշխատավարձն իրականում շատ ավելի բարձր է, քանի որ մասնավոր ընկերությունների գերակշիռ մասը իրենց հաշվետվություններում աշխատակիցների աշխատավարձերի չափը նվազեցված են ցույց տալիս:

Արտաքին առեւտրաշրջանառությունն աճխուժանում է: Այս տարվա 9 ամիսներին ավելացել է 23,6 տոկոսով եւ կազմել 3 մլրդ 383 մլն դոլար: Արտահանումը կազմել է գրեթե 705,3 մլն դոլար, արձանագրելով 43,9 տոկոս աճ: Արտահանումը զգալիորեն ավելացել է նաեւ սեպտեմբերին օգոստոսի համեմատ՝ 25,1 տոկոսով:

Ներմուծումը կազմել է 2 մլրդ 678 մլն դոլար, աճելով 19,2 տոկոսով: Սակայն սեպտեմբերին օգոստոսի նկատմամբ ներմուծումը նվազել է 1,3 տոկոսով: Արտաքին առեւտրի բացասական հաշվեկշիռը, սակայն, շարունակել է խորանալ եւ մոտեցել 2 մլրդ դոլարի սահմանին՝ կազմելով մոտ 1 մլրդ 973 մլն դոլար:

Այսպիսով, այս տարվա առաջին 9 ամիսների ցուցանիշները ցույց են տալիս, որ մեր երկրի տնտեսությունը վերականգնվում է անցյալ տարվա ճգնաժամից, ինչպես նաեւ, որ տնտեսական աճի տեմպը թեեւ նվազել է, բայց սկսել է կայունանալ եւ որակապես փոխվել: Այսինքն՝ այն ներկա պահին արձանագրվում է արդյունաբերության աճի շնորհիվ: Մյուս կողմից, շինարարության, հատկապես մասնավոր շինարարության ոչ մեծ ծավալները խոսում են այն ամսին, որ այս ոլորտը դեռ ուշքի չի եկել ճգնաժամից հետո, ինչպես նաեւ, որ պահանջարկն էլ այստեղ դեռ հեռու է նախաճգնաժամային մակարդակից: Հետեւաբար, ինչպես շինարարության զարգացման, այնպես էլ նրա նկատմամբ պահանջարկի խթանման ուղղությամբ կառավարության ձեռնարկած քայլերն այստեղ դեռ բավարար չեն:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Այսօր որոշ շրջաններում մեկնարկում է փորձնական մարդահամարը

Նախորդների համեմատ՝ ավելացել են նոր հարցադրումներ

Գեղարքունիքի մարզի Սեւան, Տավուշի մարզի Խաչքարակ, Աչաջուր եւ այլ գյուղական համայնքներում այսօր կմեկնարկի փորձնական մարդահամար: Այս մասին երեկ՝ վիճակագրի միջազգային օրը, ասուլիսում հայտարարեց Ազգային վիճակագրական ծառայության մարդահամարի եւ ժողովրդագրության բաժնի պետ **Կարինե Կույումջյանը**՝ հավելելով, որ փորձնականը հիմնական մարդահամարի գլխավոր փորձն է միայն, որն իր հերթին Հայաստանում կանցկացվի 2011-ի հոկտեմբերի 12-21-ը: «Փորձնական մարդահամարի արդյունքները հրապարակման ենթակա չեն, սակայն մենք 2011-ի մարտին որոշ տեղեկություններ կտանք հանրությանը»:

Կույումջյանը ներկայացրեց մարդահամարի համար նախատեսված նոր հարցաթերթիկը, որտեղ ավելացել են մի քանի հարցադրումներ: Մասնավորապես՝ անձի կրոնական դավանանքի վերաբերյալ եւ տնային տնտեսությունների (հիմնականում գյուղական համայքների) ունեցած գույքի, ընտանի կենդանիների, անգամ համակարգչի վերաբերյալ: Կույումջյանը հիշեցրեց, որ համաձայն մարդահամարի մասին ՀՀ օրենքի՝ «Մարդահամարի ընթացքում անհատների վերաբերյալ ձեռք բերված տեղեկությունները որեւէ կերպ եւ որեւէ տեղում հրապարակման ենթակա չեն». «Բոլոր արդյունքները կարելի է հրապարակել բացառապես ամփոփ», ասաց բանախոսը:

Նշվեց նաեւ, որ մարդահամար անցկացնելու համար՝ սկսած նախապատրաստական փուլից մինչեւ արդյունքների հրապարակումը, անհրաժեշտ է հինգ տարվա կտրվածքով 2,5 մլրդ դրամ. «Այս պահի դրությամբ ՀՀ կառավարությունը հատկացրել է միայն 21 տոկոսը ընդհանուր գումարի եւ այժմ դիմել է որոշ դոնոր կազմակերպությունների՝ ֆինանսավորման ակնկալիքով: Մենք ունենք արդեն ՄԱԿ-ի փոխանցումը՝ 47 հազար դոլար, ընթացքի մեջ են նաեւ Իտալիայի կառավարությունից 12 հազար եվրոյի եւ Համաշխարհային բանկից 100 հազար դոլարի ստացումները», տեղեկացրեց Կույումջյանը:

Նախորդ մարդահամարի ժամանակ բազմաթիվ քաղաքացիներ բողոքում էին, որ հաշվարարները չեն այցելել իրենց բնակարաններ, որոշ տներում փաստացի արդյունքում է, օրինակ, 3 հոգի, բայց գրանցված է 5-ը. այս խնդիրների, եւ առհասարակ հաշվարարների աշխատանքը վերահսկելու առումով տիկին Կույումջյանը որեւէ մտահոգություն չունի. «Նախ մենք ՋԼՄ-ների միջոցով տանելու ենք ակտիվ քարոզչություն, իրազեկելու ենք մարդահամարի մասին, ապա նաեւ, շեշտեմ, հաշվարարի աշխատանքները, որը ներառում է տեղեկությունների հավաքագրում 250-350 բնակչից, վերահսկվելու է մի քանի օղակներից՝ սկսած տարածքային վիճակագրական վարչությունից, մինչեւ գլխավոր վիճակագրական վարչություն», եզրափակեց Կարինե Կույումջյանը:

Հ. Ա.

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Ուսուցիչների մասնագիտական որակավորումների բարձրացման դասընթացներ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում

Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ, «Որակ եւ համապատասխանություն» ծրագրի շրջանակներում, 2010 թվականի սեպտեմբերի 13-ից հոկտեմբերի 9 Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում անցկացվեց Երեւանի ավագ դպրոցների ուսուցիչների որակավորման բարձրացման դասընթացների 2-րդ փուլը:

Դասընթացներին մասնակցեց 254 ուսուցիչ:

Որակավորման բարձրացման դասընթացներն ընթացան երկու ուղղություններով՝ նեղ մասնագիտական եւ ընդհանուր կրթական, որի մեջ ներառվեցին գնահատման նորագույն ձեւերն ու տեղեկատվական տեխնոլոգիաները:

Հոկտեմբերի 18-ին համալսարանում անցկացվեց «Ավագ դպրոցի ուսուցիչների մասնագիտական որակավորումների բարձրացման դասընթացներ» ծրագրին մասնակցած ուսուցիչների հավաստագրերի հանձնման արարողություն: Այն բացեց Խ. Աբովյանի անվան հայկական պետական համալսարանի ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը: Նա շնորհավորեց դասընթացի մասնակիցներին եւ գործընթացի կազմակերպիչներին՝ ասելով, որ դասընթացները հավաստեցին մեր ուսուցիչների պատրաստակամությունը ազգային դպրոցի հետագա զարգացման գործին:

Ուսուցիչներին ողջունեց ՀՀ կրթության եւ գիտության նախարար Արմեն Ատոյանը: Նա ընդգծեց Մանկավարժական համալսարանի համակցող դերը բարձրագույն կրթության եւ հանրակրթության միջեւ, կրթական բարեփոխումների համատեքստում անդրադարձավ ավագ դպրոցների կայացման հիմնախնդիրներին եւ նրանց հետ կապված առաջիկա ծրագրերին, շնորհավորեց դասընթացի մասնակիցներին եւ շնորհակալություն հայտնեց Մանկավարժական համալսարանին՝ համատեղ արդյունավետ համագործակցության համար:

Կրթական ծրագրերի իրականացման կենտրոնի տնօրեն Կարինե Հարությունյանը ներկայացրեց այն համալիր ծրագիրը, որի իրականացման արդյունքում ուսուցումը կդառնա առավել ժամանակակից ու հետաքրքիր:

Ելույթ ունեցան նաեւ համալսարանի պրոֆեսոր, ՀՀ ազգային ակադեմիայի թղթակից անդամ Արտեմ Սարգսյանը, թիվ 149 ավագ դպրոցի տնօրեն Գայանե Գալստյանը եւ թիվ 65 ավագ դպրոցի հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի Արմինե Սաֆարյանը:

Արարողության ավարտին ՀՀ ԿԳ նախարար Արմեն Ատոյանը հավաստագրեր հանձնեց 19 դպրոցների վերապատրաստման դասընթացների մասնակիցներին, ովքեր ատեստային եւ ջերմ մթնոլորտի համար իրենց գոհունակությունը հայտնեցին գործընթացը համակարգող Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կոլեկտիվին:

Ավարտվեց ուսուցիչների որակավորման բարձրացման դասընթացների եւս մեկ փուլ, որը փաստեց. որակավորումը ամենօրյա, շարունակական գործընթաց է, եւ գիտելիքներ պետք է ձեռք բերել ամեն օր:

ՍԻԼՎԱ ԱԱԲՅԱՆ

«Մեր պետականությունը սաղմնային, փխրուն վիճակում է»



Ռուսաստանի Դաշնության սփյուռքահայ կազմակերպությունների կոմիտեի նախագահ Վարդան Մուշեղյանը Սփյուռքը կորցնելու վտանգներ է տեսնում: Երեկ «Դե ֆակտո» ակումբում Վ. Մուշեղյանը հայտնեց իր մտահոգությունները: «Ամեն մի հայի համար, որն ապրում է հայրենիքից դուրս, Հայաստանը շատ թանկ է: Ինչ-որ հանգամանքներից ելնելով հայրենիքից հեռու ապրողները չեն կարողանում ներդրումներ անել իրենց երկրի զարգացման համար», ասաց Վ. Մուշեղյանը: Վերջինս նշեց, որ Հայաստանի տնտեսությունն այսօր մի քանի տասնյակ ընտանիքների ձեռքում է: «Մեր պետականությունը սաղմնային, փխրուն վիճակում է, իր մոդելով դեռեւս չի կայացել, եւ Սփյուռքը դա զգում է», ասաց բանախոսը, ապա հավելեց. «Ամուր պետականությունն է հզորացնում ազգը»: Հարցին, թե մութ ու ցուրտ 90-ականներից հետո բանախոսը Հայաստանում որեւէ դրական շարժ չի՞ տեսնում, Վ. Մուշեղյանը պատասխանեց. «Կոռուպցիան կա, ուրեմն ոչ մի շարժ չկա»:

Ի. Պ.

«Նոր հոդեներ» «Վիվասել-ՄՏՍ»-ից՝ կանխավճարային բաժանորդների համար

Ինչպես տեղեկացանք «Վիվասել-ՄՏՍ»-ից, ընկերությունը կանխավճարային բաժանորդներին առաջարկում է «Նոր հոդեներ» աննախադեպ ծառայությունը, որը հնարավորություն է ընձեռում քարտի վավերականության ժամկետի օրերն անվճար փոխանակելու ներքնցանցային խոսելաժամանակի հետ: Վավերականության յուրաքանչյուր 5 օրվա դիմաց կարելի է ստանալ 1 հոդե ներքնցանցային խոսելաժամանակ՝ պարզապես հավաքելով *555*պահանջվող հոդեների թիվը # եւ սեղմելով զանգահարելու կոճակը: Օրինակ՝ *555*40# հավաքելու դեպքում բաժանորդը կստանա 40 հոդե ներքնցանցային խոսելաժամանակ, իսկ քարտի վավերականության ժամկետը կնվազի 200 օրով:

Նախկան փոխանակումը կարելի է ստուգել քարտի վավերականության օրերի թիվը՝ ուղարկելով *555*0# հրահանգը: Իսկ փոխանակման արդյունքում ստացված ներքնցանցային հոդեները կարելի է ստուգել՝ ուղարկելով *555# հրահանգը:

Ա. Մ.

Տնտեսագիտական բարձրագույն կրթությունը Հայաստանում

Տնտեսագիտական բարձրագույն կրթության 90 եւ տնտեսագիտական բուհի 80-ամյակի առթիվ

Կրթության եւ գիտության հանդեպ հայ ժողովրդի ունեցած յուրահատուկ սերն ու ձգտումը դրսեւորվել են նրա հազարամյակների պատմության բոլոր ժամանակաշրջաններում: Սակայն դարեր շարունակ իր պետականությունը կորցրած ուսումնատենչ հայը իր ուսման ծարավը սփոփված էր հագեցնել ուրիշ երկրներում: 19-րդ դարի 40-50-ական թվականներից սկսած հայ առաջավոր մտավորական գործիչները՝ Խ. Աբովյանը, Մ. Նալբանդյանը, Ս. Նազարյանցը, ապա նաեւ Ս. Շահազիզը, Հովհ. Թումանյանը եւ այլք, ջանքեր չէին խնայում հայկական համալսարանի անհրաժեշտությունը հիմնավորելու եւ այն հնարավորինս շուտ բացելու խնդրի լուծման համար: Մ. Նալբանդյանը այսպես էր ներկայացնում ստեղծված իրավիճակը. «Մեզանից յուրաքանչյուր ոք գերմանական, ֆրանսիական եւ ռուսական համալսարաններում դեգերելով, օտարության մեջ, հազարավոր նեղությունների համբերելով, օրը խավարեցնելով, սատանջել է մարդկության ընդհանուր լույսից յուր բաժին մի ճառագայթ»:

Համալսարան ստեղծելու մտահոգությունը համակել էր ողջ հայ առաջատար մտավորականությանը, որի իղձերն անկատար մնացին մինչեւ 1918թ., երբ Հայաստանը անկախություն նվաճեց եւ վերականգնվեց հայոց պետականությունը: Շատ չանցած՝ արդեն 1919թ. մայիսի 16-ին Հայաստանի Հանրապետությունը որոշում ընդունեց համալսարանի հիմնադրման մասին:

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման առաջին ամիսներին կառավարությունը որոշում է վերակազմել համալսարանը: 1920թ. դեկտեմբերի 28-ին լուսժողկոմ Ա. Հովհաննիսյանը ստորագրում է «Երեւանի ժողովրդական համալսարանի կազմակերպման մասին» հրամանը, ըստ որի այն բացվում է երկու ֆակուլտետով՝ հասարակագիտական եւ բնագիտական: Նորաստեղծ համալսարանի գործունեության առաջին իսկ տարվա ընթացքում (1921թ. հոկտեմբերին), ելնելով մասնագետ կադրերի նկատմամբ եղած մեծ պահանջարկից, այն վերակառուցվեց՝ նախկին երկու ֆակուլտետի փոխարեն ստեղծվեց հինգը, որոնցից մեկն էլ խորհրդային շինարարության ֆակուլտետն էր: Վերջինս հիմնականում կադրեր պետք է պատրաստեր ֆինանսական եւ բանգյուղտեսչության մարմինների համար՝ «Ֆինանսներ» եւ «Պլանավորում» մասնագիտություններով: Ֆակուլտետի առաջին դեկանը Գ. Ղարաջյանն էր, իսկ 1922թ. փետրվարից՝ Ց. Խանզադյանը: Տարին դեռ չբոլորած՝ 1922թ. սեպտեմբերի 1-ին վերականգնվեց հասարակագիտական ֆակուլտետը, որի կազմի մեջ մտան նաեւ վերոհիշյալ տնտեսագիտական մասնագիտությունները եւ որն էլ, իր հերթին հետագայում վերանվանվեց իրավատնտեսագիտական (1926թ.), ապա՝ սոցիալ-տնտեսագիտական (1928թ.)՝ գործելով մինչեւ 1929-30 ուսարվա ավարտը:

Երեւանի համալսարանը իր գոյության առաջին տարիներին մեծ ջանքեր էր գործադրում դասախոսական կազմը մասնագետ կադրերով համալրելու համար: 1921թ. համալսարան հրավիրված առաջին դասախոսների թվում էին նաեւ ճանաչված տնտեսագետներ Հայկ Ազատյանը եւ Թադեւոս Ավդալբեգյանը:

Հայկ Ազատյանը դասախոսություններ է կարդացել «Քաղաքատնտեսություն» եւ «Ագրարային հարց» առարկաներից: 1956թ. Հ. Ազատյանը ընտրվել է ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, 1961թ.՝ արժանացել է ՀԽՍՀ եւ ՎրԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչման:

Թադեւոս Ավդալբեգյանը դասավանդել է «Տնտեսական զարգացման պատմություն», «Հայ հասարակական մտքի պատմություն» առարկաները եւ աշխատել է մինչեւ 1930թ.: Նրա գրչին են պատկանում Հայաստանի տնտեսական պատմությանը վերաբերող մի շարք արժեքավոր աշխատություններ: Թ.Ավդալբեգյանը հայտնի է նաեւ որպես Կ.Մարքսի «Կապիտալի» բնագրից կատարած բարձրորակ թարգմանության, ինչպես նաեւ «Ռուս-հայերեն տնտեսագիտական տերմինների բառարանի» հեղինակ:

1925թ. համալսարան է հրավիրվել տնտեսագետ, փիլիսոփա, պատմաբան Հակոբ Զորյանը եւ դասավանդել «Քաղաքատնտեսություն», «Հայ ժողովրդի պատմություն» առարկաները:

1929թ. համալսարան է հրավիրվել Ղեւոնդ Լեւոնի Շահարյանը եւ դասավանդել է «Ֆինանսներ» առարկան: 1931թ. եղել է ֆինանսների ամբիոնի վարիչը (Կոոպերատիվ-տնտեսագիտական ինստիտուտում, ապա՝ ԵՊՀ-ում): 1957թ. մինչեւ կյանքի վերջը Ղ. Շահարյանը ԵՊՀ-ի տնտեսագիտական ֆակուլտետի դեկանն էր:

1930 թ. խորհրդային Միությունում արմատական վերափոխումներ իրականացվեցին բարձրագույն եւ միջնակարգ մասնագիտական կրթության ոլորտում՝ ԽՍՀՄ Կենտգործկոմի որոշմամբ. «Բազմաֆակուլտետ բարձրագույն ուսումնական հաստատությունները եւ տեխնիկումները վերակազմվում են ճյուղային ուսումնական հաստատությունների»: Համապատասխան որոշում է ընդունում նաեւ Անդրկովկասի ժողկոմխորհը (1930թ., հունիս), որով Թիֆլիսի եւ Բաքվի բուհերի հետ միաժամանակ ՀԽՍՀ պետական համալսարանը նույնպես վերակազմավորվում է՝ գործող հինգ ֆակուլտետների բազայի վրա ստեղծվում են համապատասխան մասնագիտությամբ հինգ ինքնուրույն ինստիտուտներ, այդ թվում՝ Կոոպերատիվ-տնտեսագիտական ինստիտուտը, որի տնօրինությունը հանձնվում է Կոոպերացիային՝ Հայկոոպին:

Չնայած Կոոպերատիվ-տնտեսագիտական ինստիտուտի տնօրինումը հիմնադրման օրվանից հանձնվել էր Կոոպերացիային՝ Հայկոոպին, բայց ֆինանսավորումը կատարում էին նաեւ Ֆինանսների եւ Մատակարարման ժողկոմատները, քանի որ ինստիտուտը կադրեր էր պատրաստում նաեւ այս վերջինների համար, որոնք ձգտում էին որոշակի ազդեցություն ունենալ ինստիտուտի գործունեության նկատմամբ: Այստեղից էլ ինստիտուտի տարբեր անվանումները՝ Առեւտրա-կոոպերատիվ, Ֆինանսա-տնտեսագիտական, Առեւտրա-կոոպերատիվ-ֆինանսական, Մատակարարման եւ կոոպերացիայի եւ այլն, որոնք վերոհիշյալ երեք գերատեսչությունների կողմից ինստիտուտն իրենց համար ցանկալի անվանմամբ կոչելու արդյունքն են: Նշված գերատեսչությունների միջեւ ինստիտուտի կառավարման կապակցությամբ ծագած հակասությունները հաղթահարելու, ինչպես նաեւ ինստիտուտը Երեւանից Լենինական տեղափոխելու հետ կապված նոր խնդիրներին լուծում տալու նպատակով 1932թ. փետրվարի 2-ին ՀԿ(բ)Կ Կենտրոնական կոմիտեն ընդունել է «Կոոպերատիվ-տնտեսագիտական ինստիտուտի վիճակի մասին» հարցը: Ընդունած որոշման մեջ նախ՝ միանշանակ ամրագրված է, որ ինստիտուտի ղեկավարումը հանձնվում է Հայկոոպին, երկրորդ՝ նպատակահարմար է համարված ինստիտուտում աշխատելու համար հավաքագրել մի խումբ առաջատար դասախոսների (թվարկվում են անուն ազգանունները՝ Վռամ Կոստանյանի գլխավորությամբ) եւ երրորդ՝ ինստիտուտը Երեւանից Լենինական տեղափոխելու կապակցությամբ հանձնարարվել է նրանց վարիչները, իսկ ինստիտուտի շրջանավարտներ Հ. Թումանյանը, Կ. Կարագյանը, Պ. Ոսկերչյանը, Մ. Բաղդասարյանը, Լ. Շահաթունին իրենց դասախոսների հետ երկար տարիներ աշխատել են ԵՊՀ-ի տնտեսագիտական ֆակուլտետում՝ անմնացորդ նվիրվելով բարձրորակ տնտեսագետ կադրեր պատրաստելու գործին:

Այսպիսով՝ Հայաստանում տնտեսագիտական բարձրագույն կրթության եւ ՀՊՏՀ պատմությունը սկսվում են մեր երկրում բարձրագույն կրթության սկզբնավորման եւ տնտեսագիտական առաջին բուհի հիմնադրման ժամանակներից, երբ 1920թ. ավագ սերնդի տնտեսագետների ջանքերով դրվեցին տնտեսագիտական բարձրագույն կրթության հիմքերը, իսկ 1930թ. հիմնադրվեց Կոոպերատիվ-տնտեսագիտական ինստիտուտը: Չնայած ընդամենը երեք տարի անց (1933թ.) Մանկավարժական եւ Կոոպերատիվ-տնտեսագիտական ինստիտուտների բազայի վրա ԵՊՀ-ի վերաբացման կապակցությամբ տնտեսագետ կադրերի պատրաստումը շարունակվել է համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետում, որն անշուշտ, նպաստել է տնտեսագիտական կրթության որակական աճին եւ պայմաններ ստեղծել տնտեսագիտական ինքնուրույն բուհի վերածննդի համար, սակայն Կոոպերատիվ-տնտեսագիտական ինստիտուտը, որի հիմնադրման 80-ամյակը լրանում է այս տարի, կատարել է իր պատմական դերը տնտեսագիտական բարձրագույն կրթության զարգացման գործում:

ԵՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի առաջին դեկանը (1933թ.) Կ. Խաչատրյանն էր, ապա՝ Հ. Պետյանը, ամբիոնների վարիչներ էին Ն. Ստեփանյանը (քաղաքատնտեսության), Ղ. Շահարյանը (ֆինանսների), Վ. Կոստանյանը (պլանավորման), Ա. Գարամյանը (հաշվառման եւ վիճակագրության), առաջատար դասախոսներ՝ Հ. Թումանյանը, Բ. Հարությունյանը, Ն. Գասպարյանը, Մ. Եգանյանը, Ե. Այվազյանը, Վ. Մելիքյանը, Ա. Առաքելյանը, Ս. Սանթրոսյանը, Ս. Իսահակյանը: 30-ական թվականների երկրորդ կեսին ԵՊՀ տնտեսագիտական ֆակուլտետում աշխատանքի են հրավիրվել Զ.Բաբինջաղյանը (1936թ.) եւ Կ.Կարագյանը (1938թ.), իսկ 1933թ. սկսած համատեղության կարգով մինչեւ 1970-ական թվականները դասավանդել է Մ. Ադոնցը: Այս փառավոր եռյակը Ղ. Շահարյանի եւ Հ. Թումանյանի հետ միասին իրենց հայրենանվեր աշխատանքով անգնահատելի ծառայություն մատուցեցին հանրապետության ժողովրդական տնտեսության համար բարձրագույն կրթությամբ տնտեսագետ կադրեր պատրաստելու գործին:

Հայաստանում տնտեսագիտական ինքնուրույն բուհի երկրորդ ծնունդը կամ նորագույն պատմությունը սկիզբ է առել 1975թ. օգոստոսի 6-ից, երբ ՀԿԿ Կենտկոմի եւ ՀԽՍՀ Նախարարների խորհրդի որոշմամբ ԵՊՀ տնտեսագիտական, ապրանքագիտության եւ առեւտրի էկոնոմիկայի, ղեկավար աշխատողների եւ մասնագետների որակավորման բարձրացման ֆակուլտետների բազայի վրա կազմավորվեց Երեւանի ժողովրդական տնտեսության ինստիտուտը, որը ՀՀ կառավարության 1999թ. նոյեմբերի 30-ի որոշմամբ վերանվանվեց Երեւանի պետական տնտեսագիտական ինստիտուտ, իսկ 2006թ. հունիսի 6-ին ստացավ համալսարանի կարգավիճակ եւ կոչվեց Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան:

Ի տարբերություն Կոոպերատիվ-տնտեսագիտական ինստիտուտի, Երեւանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի կազմավորումը տեղի ունեցավ միանգամայն այլ պայմաններում: ԵՊՀ-ի կազմում ավելի քան չորս տասնամյակի ընթացքում տնտեսագիտական ֆակուլտետը, շնորհիվ համալսարանում ստեղծված բարենպաստ պայմանների եւ ֆակուլտետի անձնակազմի քրտնաջան աշխատանքի, իսկայական առաջընթաց էր ապրել գիտամանկավարժական գործունեության բոլոր ոլորտներում: Բավական է ասել, որ Ե�րԺՏԻ-ի կազմավորման նախօրյակին (1974թ.) տնտեսագետ ուսանողների թվականակը 1934թ. համեմատությամբ տասնապատկվել էր՝ 305-ից հասնելով շուրջ 3 հազարի, իսկ մասնագիտությունների թիվը՝ 4-ից 11-ի: Սակայն բարձրագույն կրթությամբ տնտեսագետների նկատմամբ պահանջարկն աճում էր առաջանցիկ տեմպերով, ինչով էլ պայմանավորված էր տնտեսագիտական ինքնուրույն բուհի կազմավորման անհրաժեշտությունը 70-ական թվականներին:

Անցած երեք եւ կես տասնամյակի ընթացքում ՀՊՏՀ կոլեկտիվը՝ շնորհիվ ողջ անձնակազմի հետեւողական եւ քրտնաջան աշխատանքի ակնառու հաջողությունների է հասել ինչպես ուսումնամեթոդական, այնպես էլ գիտահետազոտական աշխատանքների բնագավառում: Միայն վերջին հինգ տարվա ընթացքում մասնագիտական ամբիոնների թիվն ավելացել է 4-ով եւ հասել 22-ի, որոնք եւս ութ հումանիտար եւ բնագիտական ամբիոնների հետ հաջողությամբ իրականացնում են մասնագիտական գիտելիքներով եւ ունակություններով օժտված ու համակողմանի զարգացած տնտեսագետների պատրաստումը: Ավելի տպավորիչ է մասնագիտությունների եւ մասնագիտացումների թվի աճը՝ բակալավրիատում դրանք այժմ 25-ն են, իսկ մագիստրատուրայում՝ 35-ը: Այդ նույն ժամանակահատվածում ուսանողների թիվն աճել է ավելի քան 60%-ով՝ 2005թ. 4730-ից 2009-2010 ուսարում հասնելով շուրջ 7500-ի, որը հանրապետությունում տնտեսագետ կադրերի նկատմամբ պահանջարկի աճի, ինչպես նաեւ մեր բուհի վարկանիշի շարունակական բարձրացման վկայությունն է: Համալսարանի ամբիոնները համալրված են որակյալ, գիտական աստիճան ու կոչում ունեցող կադրերով. պրոֆեսորադասախոսական համակազմի 370 աշխատողներից 1-ը ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ է, 45-ը՝ գիտության դոկտոր, պրոֆեսոր, 146-ը՝ գիտության թեկնածու, դոցենտ, 72-ը՝ գիտության թեկնածու:

Մեր այսօրվա հաջողությունները միանգամից չեն ձեռք բերվել: Դրանց հիմքերը դրվել են Հայաստանում տնտեսագիտական բարձրագույն կրթության սկզբնավորման եւ առաջին տնտեսագիտական բուհի հիմնադրման ժամանակներից, ամրապնդվել ու զարգացվել են ԵՊՀ տնտեսագիտական ֆակուլտետում: Ուստի միանգամայն տեղին ու հիմնավոր է ՀՊՏՀ ռեկտորատի եւ գիտխորհրդի որոշումը՝ 2010թ. հոկտեմբերին նշելու տնտեսագիտական բարձրագույն կրթության 90 եւ տնտեսագիտական ինքնուրույն բուհի՝ Կոոպերատիվ-տնտեսագիտական ինստիտուտի 80-ամյակը, որը միաժամանակ ՀՊՏՀ-ի՝ որպես այդ ինստիտուտի ժառանգորդի, 80-ամյակն է: Այդ որոշումը թելադրված է մեր արմատների, մեր ավագ սերունդների նկատմամբ ունեցած պարտքի ու պատասխանատվության գիտակցման անհրաժեշտությամբ:

ՅՈՒ. Մ. ՍՈՒՎԱՐՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

Լ. ԽՄԵՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտորի խորհրդական, դոցենտ

Հացադուլ Իգդիրում՝ «հանուն Ղարաբաղի»

Հոկտեմբերի 18-ի առավոտյան Իգդիրում հացադուլ է սկսել «Հայկական անհիմն պնդումների դեմ պայքարի» միությունը: Հացադուլը եղել է երկօրյա, ավարտվել է հոկտեմբերի 19-ի գիշերը: Այդ մասին նույն օրը տեղեկացրել էր «Սիյասալբիհիֆիմ» կայքէջը: Ըստ տեղեկության, «Հայկական անհիմն պնդումների դեմ պայքարի» միության նախագահ Գյոքսել Գյուլբեյը պարզաբանումներ է տվել հացադուլի դրդապատճառների մասին: Նա ասել է. «Հացադուլը երկօրյա է: Մենք այս արարքով կոչ ենք անում ԵԱՀԿ Մինսկի խմբին, որպեսզի հետամուտ լինի Ղարաբաղի օկուպացիան վերացնելու իր իսկ ընդունած որոշումներին: Աշխարհը չպետք է անտեսի այս օկուպացիան»:

Միության անդամ Իսմեթ Թաղալը հավելել է նրան: Թաղալը ներկաներին նախ հիշեցրել է, թե հայերն իր պարերին ինչպես են ողջակիզել թոնրատանը, ապա եւ ավելացրել. «Այն տերությունները, որոնք հարատանում են մարդու իրավունքների պաշտպանությամբ, չգիտես ինչու, կարողանում են ողջամտորեն հանդուրժել 1 միլիոն ազերի թուրքերի անտանելի կացությունը այն առումով, որ վերջիններս օկուպացիայի հետեւանքով վտարված լինելով Ղարաբաղից, շարունակում են առ այսօր վագոններում բնակվել: Ժամանակին հայերը գազանաբար սպանել են նաեւ իմ ազգականներին: Կոչ ենք անում Մինսկի խմբին, որ արժանապատվորեն վերաբերվի Ղարաբաղի մասին իր ընդունած որոշումներին: Դիմում եմ նաեւ նրանց, ովքեր Թուրքիայում «բոլորս հայ ենք» կարգախոսով դատապարտել էին Հրանտ Դինքի սպանությունը: Ինչո՞ւ նրանք լռության են մատնում 613 ազերի թուրքի սպանությունը Ադրբեջանում»:

«Հայկական անհիմն պնդումների դեմ պայքարի» միության երկօրյա հացադուլը հայտարարությամբ պաշտպանել է նաեւ Կարսում Ադրբեջանի փոխխորհրդատու Ռաֆիկ Ռուսթեմովը, ասելով. «Մեր ժողովուրդն ու պետությունը երախտագիտությամբ հետեւում է թուրքական պետության եւ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների այն բոլոր քայլերին, որոնք ուղղված են Լեռնային Ղարաբաղի օկուպացիայի վերացմանը: Աշխարհն անտեսում է Ղարաբաղում առկա օկուպացիան: Արհեստականորեն երկարաձգվում են հակամարտության կարգավորման ճանապարհները: Վավերագրերով ապացուցված են հայերի իրական նացրած ջարդերը: Ադրբեջանի հանրապետությունը իր հնարավորության սահմաններում անում է այն, ինչ անհրաժեշտ է հակամարտության կարգավորման համար: Ադրբեջանական ժողովրդի եւ պետության անունից պաշտպանում եւ աջակցում ենք «Հայկական անհիմն պնդումների դեմ պայքարի» միության անդամների ձեռնարկած այս խորհրդաշնչ միջոցառումն ու իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում միության անդամներին»:

Հիրավի այսպիսի միջոցառումները շատ խորհրդաշնչ են դառնում, երբ ոչ թե մեկ, այլ երկու օրով են կազմակերպում, այն էլ՝ հացադուլի տեսքով: Խնդիրը, սակայն, խեղկատակություն հիշեցնող հացադուլը չէ, ոչ էլ «Հայկական անհիմն պնդումների դեմ պայքարի» միության այս խեղկատակությամբ արտահայտվող համերաշխությունը ադրբեջանցի եղբայրների հետ, այլ՝ Թուրքիան եւ Ադրբեջանը: Եթե վերջիններս իսկապես մեկ ազգի երկու պետություններ են, ապա թուրքերի եւ ադրբեջանցիների պարագայում էլ պետք է ճիշտ լինի հայկական առաջը. «Շունը շնից, երկուսը՝ մի տնից»:

Հ. ՉԱՔՐՅԱՆ

«Եվ վերադարձնելով դիմանկարը...»

Ադրբեջանի ԱԳՆ խոսնակ **Էլխան Փոլուխովը**, որին հայրենիքում կասկածում են «ջուղամասոնականության եւ երկրի արտաքին քաղաքականությունը վտանգելու» մեջ, եւս մեկ անգամ «մտքի պայծառության» պահ է ունեցել. նա հանկարծ հիշել է Սադդամ Հուսեյնին: Փոլուխովն, իհարկե, իրական բռնապետի մասին դատողություններ է արել ՀՀ արտաքին քաղաքականության «գնահատման» կոնտեքստում, բայց մարդիկ երբեմն ասում են բաներ, որոնց սեւեռված են լինում սեփական ճակատագրի մտահոգությամբ:

Թեեւ «ամեն մի համեմատություն կաղում է», բայց սա այն դեպքն է, երբ Ադրբեջանի ԱԳՆ խոսնակը, գուցե ենթագիտակցաբար, բայց շատ նրբորեն ընդհանրություն է տեսել իր երկրի առաջնորդի եւ իրական մոլագարի միջեւ:

Չէ՞ որ Սադդամն էր Մեծաքվոր Արեւելքն ու ամբողջ աշխարհը ահաբեկում սպառազինությունների կատաղի մրցավազքով: Չէ՞ որ նա էր իրական նավթի վաճառքից գոյացած գումարները գրեթե լիովին ուղղում «բանակաշինության» եւ «ազգային ոգու բարձրացման» գործին:

Իրական բռնապետն էր, որ զանգվածային հոգեգարության էր մատնել հիպատակներին: Սադդամի արձաններն էին Իրաքում ամենուր հիշեցնում, թե «ում են պարտական սոսկական մահկանացուներն իրենց երջանկության համար»: Եվ Սադդամն էր, որ կեղծավորաբար ասկետություն էր քարոզում, բայց միլիարդավոր դոլարների հարստություն ուներ արտերկրի բանկերում: Վերջապես, նա էր, որ Իրաքի ազգային փոքրամասնություններին ենթարկել էր ցեղասպանության եւ բռնաճնշում էր նրանց իրավունքները:

Նույն կերպ Իլհամ Ալիեւն է մարդկանց թշվառություններն անտեսած՝ տարեցտարի ավելացնում ռազմական ծախսերը: Նա է ամեն օր խոսում «սրբազան պատերազմի իրավունքից»: Ադրբեջանում է, որ ամեն քայլափոխի հառնում է «համազգային առաջնորդ Հեյդար Ալիեւի» արձանը, որին հոգատարները պարտադրված են անմռունչ խնկարկել: Եվ Իլհամ Ալիեւն է, որ կոչ է անում «զենքով լուծել ԼՂ հարցը», իսկ երկրի էթնիկ փոքրամասնություններին պարտադրում իրենց համարել «միասնական ադրբեջանական ժողովրդի մաս»: Նա է, որ մանկահասակ որդու անունով հարյուրավոր միլիոն դոլարների սեփականություն է գնել Դուբայում: Ալիեւների ընտանիքն է, որ կառավարում է երկրի ամբողջ ազգային հարստությունը:

Նմանություններն, ինչպես տեսնում ենք, բավական ընդգծվում են, եթե, ի վերջո, նաեւ նկատի ունենանք, որ Իլհամ Ալիեւի ռազմատենչ մոլագարությունը սպառնալիք է ոչ միայն իր երկրի եւ ժողովրդի, այլեւ ամբողջ Հարավային Կովկասի, թերեւս նաեւ ամբողջ աշխարհի համար:

Ադրբեջանցիները մի խոսք ունեն. «Գժից ճշմարտություն լսեցինք»: Էլխան Փոլուխովն, ահա, այն «գիժն» է, որ միջազգային հանրությանը հասկացրել է, թե ինչ է սպասվում, եթե վերջինս ժամանակին չվերանայի Ադրբեջանի հանդեպ իր քաղաքականությունը:

Իսկ գուցե ադրբեջանական ընդդիմությունը ճի՞շտ է ասում, եւ Փոլուխովն իրոք այլ երկրների շահե՞ր է սպասարկում: Բայց դա արդեն Իլհամ Ալիեւի խնդիրն է: Չէ՞ որ ամեն ինչից զատ նա պետության ղեկավար է համարվում, եւ սահմանադրությամբ նրան է «պատկանում գործադիր իշխանությունը», որի մի գերատեսչության պատասխանատուներից է Էլխան Փոլուխովը:

ՎԱՀԲԻՍ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Պենտագոնը ծառայության կընդունի նաեւ միասեռականներին

ԱՄՆ ռազմական գերատեսչությունը համաձայնել է բանակում ծառայության ընդունել իրենց միասեռական հակումները չթաքցնող անձանց: Բանակային անձնակազմ հավաքագրողներին հանձնարարված է ընդունել արվամոլներին եւ լեսբուհիներին: Այդ մասին հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը:

Բացահայտ արվամոլներին եւ լեսբուհիներին ծառայության ընդունելը նշանակում է «մի՛ հարցրու, մի՛ ասա» բանակային չգրված կանոնի փաստացի վերացում: Այդ կանոնը վերոհիշյալ անձանց արգելում է ծառայել բանակում, եթե նրանց սեռական կողմնորոշումը հայտնի է դառնում ծառայակիցներին կամ հրամանատարությանը:

Մինչեւ վերջերս արվամոլները եւ լեսբուհիները նախընտրում էին հավաքագրողներին չպատմել իրենց ոչ ավանդական սեռական կողմնորոշման մասին, որպեսզի ընդունվեին բանակային ծառայության:

«Մի՛ հարցրու, մի՛ ասա» կանոնը ամերիկյան բանակում գործում է 1993-ից: Դրանից առաջ սեռական փոքրամասնությունների բանակային ծառայությունն առհասարակ արգելվում էր:

Բան Կի Մունը խնդադատեց Եվրոպայի հակահալամական տրամադրությունները

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի Մունը «վտանգավոր միտում» է անվանել Եվրոպայում մահմեդական ներգաղթյալների նկատմամբ վերջերս դրսեւորվող անհանդուրժողականությունը:

Եվրոխորհրդարանի նիստում ելույթ ունենալով՝ Բան Կի Մունը նախազգուշացրել է, որ նմանօրինակ կարծրատիպերը վտանգավոր ուղի են, որը տանում է դեպի Եվրոպայի պատմության խավար ժամանակաշրջան: Գլխավոր քարտուղարը եվրոպացիներին կոչ է արել հրաժարվել մահմեդականների հանդեպ ատելության սերմանումից: Այդ մասին հաղորդում է RFI ռադիոկայանը:

Բան Կի Մունը ակնարկել է մասնավորապես Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելի ելույթը, որին «Ազգը» անդրադարձել էր երեկվա համարում: Պոտսդամում Քրիստոնեա-դեմոկրատական միության երիտասարդական թեւի ժողովում Մերկելը խոստովանել էր, որ Գերմանիայի տարածքում բազմամշակութային հասարակություն կառուցելու գաղափարը «լիովին ձախողվել էր»:

Ըստ Մերկելի՝ տարբեր մշակույթների ու կրոնների բարիդրացիական գոյակցության հայեցակարգը «չի գործում»: Մեղավորը ներգաղթյալներն են, որոնք չեն ձգտում մերվել գերմանական հասարակությանը եւ սկզբում գոնե սովորել գերմաներեն:

Մի շարք լրատվամիջոցներում հրապարակված այդ հայտարարությունը հիմնված է Ֆրիդրիխ Էբերտի հիմնադրամի հետազոտության տվյալների վրա, որոնց համաձայն գերմանացիների 30 տոկոսը համոզված է, որ երկիրը «հագեցած է» ներգաղթյալներով:

Գերմանացիների 1/3-ի կարծիքով, 16 մլն ներգաղթյալները, ինչպես նաեւ նրանց սերունդները Գերմանիայում են սոցիալական նպաստներ ստանալու նպատակով:

Ֆրանսիացիների 60 տոկոսը հակված է բողոքի ելույթների շարունակմանը

Ֆրանսիայում արդեն մեկ շաբաթից ավելի չեն դադարում բողոքի բազմահազարանոց ցույցերը ընդդեմ կառավարության կենսաթոշակային բարեփոխման նախագծի: «Ազգը» գրել է, որ բուռն վիճաբանություններից հետո այդ փաստաթուղթը ընդունվել է խորհրդարանի ստորին պալատում՝ Ազգային ժողովում: Սենատում քվեարկությունը նախատեսված է շաբաթավերջին: Օրինագիծը կենսաթոշակի անցնելու տարիքը 60-ից հասցնում է 62-ի: Համաժողովրդական դժգոհության ալիքի դեմ հանդիման նախագահ Նիկոլա Սարկոզին որոշ մեղմացուցիչ ուղղումներ է ուղարկել Սենատ: Սակայն ցուցարարները պահանջում են օրագիծ հանել օրինագիծը: RFI ռադիոկայանի տվյալներով՝ երեքշաբթի օրը ամբողջ երկրում բողոքի ցույցերին մասնակցել է 3,5 մլն մարդ:

Տեղական լրատվամիջոցների անցկացրած հարցման համաձայն՝ ֆրանսիացիների 60 տոկոսը հակված է շարունակելու բողոքի ելույթները նույնիսկ Սենատում կայանալիք քվեարկությունից հետո: Հարցման մասնակիցների 40 տոկոսը կարծում է, որ քվեարկությունից հետո հարկավոր է դադարեցնել ցույցերը:

Հարցումից նաեւ պարզվել է, որ ֆրանսիացիների 62 տոկոսը նախագահից պահանջում է ընդհատել բարեփոխումների ծրագիրը, իսկ 68 տոկոսը անարդյունավետ է համարում նրա տնտեսական քաղաքականությունը: Ի դեպ, Սարկոզիի վարկանիշը աննախադեպ չափով ընկել է եւ ներկայումս կազմում է 30 տոկոս:

Հոկտեմբերի 19-ից Ֆրանսիան օգտագործում է վառելիքի հակաճգնաժամային պաշարները, քանի որ վառելիքի սովորական պահեստների մեծ մասը շրջափակված է: Հակաճգնաժամային պաշարները նախատեսված են 90 օրվա համար: Ֆրանսիայում դրանց 50 տոկոսը կազմում է անմտակ նավթը, մյուս 50 տոկոսը կազմում են նավթամթերքները (բենզին, դիզվառելիք, մազութ):

Թալիբները օգտագործում են ամերիկացիների փողով գնված ռուսական փամփուշտներ

Աֆղանստանում թալիբները ամերիկացի զինվորների վրա կրակում են հենց ամերիկացիների փողերով ձեռք բերված ռուսական փամփուշտներով: Այդ մասին «Նյու Յորք թայմս» թերթին հայտնի էր դարձել 2010-ի փետրվարին: Բայց Ռուսաստանում այդ հարցը քննարկման թեմա դարձավ օրերս, երբ ամերիկյան թերթի հոդվածի ռուսերեն շարադրանքը հրապարակվեց Искусство войны գրական ալմանախի խմբագիր Իլյա Պլեխանովի անձնական կայքում:

Հոդվածում պատմվում էր, թե ինչպես բազմաժամյա մարտից հետո ամերիկյան զորքը գրավել է ահաբեկիչների զինամթերքի մի պահեստ, որտեղ փամփուշտների տուփերը կրում են արտադրողի՝ Նովոսիբիրսկի փամփուշտի գործարանի անվանումը: Զինամթերքի մատակարարը ամերիկյան WOLF Ammunition Company ընկերությունն է, որը Պենտագոնի փողերով զենք է ձեռք բերում Ռուսաստանից:

Ակնհայտ է, որ ամերիկացիները զենք են մատակարարում Աֆղանստանի կառավարական զորքերին: Սակայն կաբառակեր զինծառայողները սեւ շուկայում վառելիք, զենք, զինամթերք եւ այլ հանդերձանք են վաճառում իրենց թալիբ հայրենակիցներին, որոնք զենքն ու զինամթերքն օգտագործում են ամերիկացիների դեմ, պարզաբանում է «Կոմսոմոլսկայա պրավդա» թերթը:

Չարենցյան «արեւահամ բառը» այժմ դառնահամ եւ օսարահամ

Անցնում ես ահա Երեւանի հերթական փողոցային շուկայով եւ ի թիվս այլ հրավերների լսում ես նաեւ անսպասելի՝ «Լավ հումորներ»: Մոտենում ես երիտասարդ վաճառողին՝ - «Շատ օգտակար գործ ես անում, բայց ինչո՞ւ «հումորներ», այլ ոչ թե «հումոր»: Նա զարմացած՝ «Իյա՜, շատ ա չէ»: Այս սպառիչ, «չուգունային» սկզբունքի հիման վրա է թեւածում այժմ ահավոր չափի հասած լեզվային «աղանդերից» մեկը՝ «իյաբատաչէ» մոլուցքը, երբ հայերենի իմաստով հավաքական բոլոր բառերը «բռնաբարվում» եւ վերածվում են հոգնակի: Ահա մի քանի օրինակ: Հեռուստահաղորդավարը «լուսավորում» է գովազդի «մութ» կողմերը՝ «պանոթերը փրկում է երեխաների կյանքերը», պատմագավորը՝ «նրանց անօրինակ հերոսությունները», կամ՝ «նրանք օգուտներ են խաղում», երաժշտասեր կինը՝ «ես մեծ հաճույքներ ստացա համերգից»: Իսկ թեյի եւ սուրճի գովազդին հրավիրված մեր հանրահայտ դերասանները, կարծես թե հենց այդ աղանդի պատվերով հուզված ցույց են տալիս խանութում՝ «Սուրճերի բազմաթիվ տեսակներ» եւ «Թեյերի մի ամբողջ աշխարհ»: Դե, ի՞նչ ասես, նույնիսկ իշխան ձուկն էլ գլխից է հոսում: Եվ այսպես շարունակ՝ ո՞ր մեկը թվես: Շվարած հարցնում ես ինքդ քեզ՝ այս ի՞նչ մոլուցքային հեղեղ է պատել մեր լեզվի գլխին անկախության տարիներին, քանի որ ահեղ թափ է առնում նաեւ մի ուրիշ մոլուցք՝ «թարգմանամոլուցքը», որի հիմնական տարածողներն են թյուրիմացաբար իրեն «էլիտա» համարող կիսագրագետ, այսպես թե այնպես ունեւոր դարձած խավը եւ ռուսախոս մեր հայ համաքաղաքացիները: Վերջիններն իրենց ռուսերեն ձեւավորված ասելիքը գրական հայերենով արտահայտելու համար կատարում են բառացի՝ երբեմն շատ դեպքերում անհեթեթ թարգմանություն, իսկ լեզվի հարցերին շատ հեռու «էլիտան» եւ մնացյալ մասսան սեփականացնում է այն որպես «պռեստիժ» խոսելաձեւ: Արդյունքում հաճախ կարելի է լսել հայերենը վարկաբեկող եւ իր իրական իմաստով զարհուրելի՝ «Նա այժմ Մոսկվայի տակ է, կամ ապրում է Մոսկվայի տակ»: Խելքի եկեք հայեր, թե ի՞նչ եք ասում եւ ինչ է հայերենում «տակ»-ը (սեղանի տակ, մահճակալի տակ, հետեւաբար, Մոսկվայում՝ գետնի տակ)՝ «Մոսկվայի մոտերքում»-ի փոխարեն: Իմաստով է գոնե հարկավոր թարգմանել «под Москвой» եւ շատ այլ արտահայտությունները, այլ ոչ թե բառացի՝ խայտառակ ձեւով: Ով է ձեզ սփիռում դավաճանել, արհամարել մեր հարուստ լեզուն, տգիտորեն կառչելով ռուսերենից, այն էլ ահավոր սխալ թարգմանությամբ: Դա մեզ պատիվ չի բերում, եթե ոչ արհամարանք հարեւան ազգերի կողմից (ինչպես ուզեց հասկացնել իմ վրացի ծանոթը): Այս «թարգմանամոլուցքում» առաջատար են նաեւ մեր սպորտային խաղերի մեկնաբանները, մանավանդ՝ ֆուտբոլի՝ Սլավա Սարգսյանի գլխավորությամբ, նույն ոգով «դաստիարակելով» նաեւ ավելի գրագետ երիտասարդ հաղորդավարներին: Արդյունքում, աշխարհի առաջնության օրերին ստանում ենք այսպիսի թարգմանչական նվերներ՝ «նրանց մոտ չի ստացվում», «նրանք չեն կարող ցույց տալ իրենց որակները»: Կամ՝ Գիլոյանի «նրանք կարողացան հավաքվել» (երեւի վախից ցրվել էին): Բանից պարզվում է, որ նա անպայման ցանկանում է ցույց տալ իր «մակարդակը» ռուսերենից թարգմանելով այդ կերպ «собраться» (սթափվել, մի բռունցք դառնալ) բառը: Սիրելի՛ս, «ոտֆ ֆո կարպեսով մեկնիր», «սար ու ձոր մի ընկնիր՝ ոտֆերդ եւ հայ լեզուն ջարդելով»: Նույնը խորհուրդ է տրվում փորձառու Ս. Սարգսյանին, ում, ցավոք, տարիների փորձը նույնիսկ խորացրել է թարգմանամոլուցքը՝ «ամեն ինչ գնում է նրան» (ո՞ւմ եւ ինչի՞ համար է «գնում նրան») եւ անհեթեթ՝ «նա չի փոխում դեմքի միմիկաները» տիպի արտահայտությունները: Հիրավի՝ տգիտությունը սահման չունի: Այստեղ ամեն ինչ պարզ է, բայց մյուս դեպքում դժվար է կռահել, թե ինչի՞ց դրդված կարծես թե մայրենիին կատարելապես տիրապետող, կիրթ ու բանիմաց, 31 ալիքի շախմատային մեկնաբան Գ. Հովհաննիսյանը «վերանայում է» (երեւի, նորարարության մղումով) հայոց լեզվի որոշ դրույթներ, հարմարացնելով ռուսերենին: Այսպես՝ դարերով մշակված պարզ ու բարեհունչ «եզակի» ձեւը, օրինակ, շախմատային թեմայով՝ «...տուրնիրին մասնակցում է 10 գրոսմայստեր» կամ «նա ունի 4 զինվոր», գիտակցաբար նա իր ելույթներում ընդգծված, կարծես դիտավորյալ, փոխարինում է երկար ու ծանրաբեռնված ռուսական հոգնակի տեսքով՝ «մասնակցում են 10 գրոսմայստերներ» կամ «նա ունի (հնարավոր է նաեւ՝ նրա մոտ կա) 4 զինվորներ» կամ «...շախմատասերների մեջ կրում են չեմպիոնի կոչումներ»: Իսկ եւ իսկ վերը նշած՝ «իյա-շատա-չէ» ռիթմիտիվ սկզբունքով, ինչը այս դեպքում եւ այդ կատարմամբ իր տաղտկալի ներ, ներ...ներ շարանով անսպասելի եւ տարօրինակ երեւույթ է: Արժի, արդյոք, հարգելի պ-ն, համառորեն շարունակել այս արատավոր խոսելաձեւը (չնայած տարիներ առաջ Ձեզ տրված բարի խորհրդին), մանավանդ որ Ձեզ է ունկնդրում ամեն կիրակի բազմահազարանոց շախմատասեր բանակը, միամտաբար ընդօրինակելով Ձեզ, քանի որ ըստ ռուսական իմաստուն ասացվածքի «дурной пример заразителен»: Այդ մոլուցքով վարակել եք նաեւ ԱԼՄ ալիքի շախմատի Ձեր կոլեգաներին եւ շատ-շատերին: Ափսո՜ն: Իսկ ո՞ւր են Լեզվի վարչությունը եւ Լեզվի մասին օրենքը... Քննողներդ անուշ: Ահա այսպես Չարենցի «արեւահամ բառը» (լեզուն) դառնում է օսարահամ, դառնահամ:

ԷԴՈՒԱՐԴ ՄՈՒՐԱԴԽԱՆՅԱՆ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Վերահրատարակվել է «Իտալերեն-հայերեն» բառարանը

Շուրջ 10 տարի է, ինչ Իտալիայի դեսպանատուն ունեցող երկրներում հոկտեմբերի 18-22-ը անցկացվում է «Իտալերեն լեզվի շաբաթ» միջոցառումը, որը կրում է «Իտալերենն աշխարհում» խորագիրը: Այդ առիթով ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ եւ հովանավորությամբ վերահրատարակվել է «Իտալերեն-հայերեն» բառարանը (635 էջ), որի հեղինակն է Մխիթարյան միաբանության անդամ Վահան վրդ. Օհանյանը: Երեկ կայացավ բառարանի շնորհանդեսը, որին ներկա էին մտավորականներ եւ հյուրեր:

Նախարար Հրանուշ Հակոբյանը ողջունելով ներկաներին, ՀՀ-ում Իտալիայի դեսպան Բրունո Սկապինիին, հայր Վահանին, բարձր գնահատեց դարեր շարունակ իտալական մշակույթի պարգեւած հրաշալի ստեղծագործությունները, որոնք այսօր էլ շարունակվում են: «Իտալիան հայ ժողովրդի համար ամենասիրելի բարեկամ երկրներից մեկն է», նշեց նախարարը, «նախ այն պատճառով, որ մեր հարաբերությունները քաղաքական եւ պետական առումով զարգանում են խիստ ներդաշնակ, այլեւ այդ բարեկամության հիմքում կա մի շատ գեղեցիկ կետ, դա Մխիթարյան միաբանությունն է. 300 տարի առաջ իտալական պետությունը (իշխանությունը) բացեց իր դռները մի խումբ հայորդիների առջեւ ու պայմաններ ստեղծեց՝ Մխիթար Սեբաստացու գլխավորությամբ: Սուրբ Ղազարը մեր ժողովրդի հպարտությունն է, դա մեր գիտական, մշակութային կենտրոնն է, նաեւ Իտալիա-Հայաստան բարեկամության ամենափայլուն արտահայտությունն է...», ասաց նախարարը:

Այնուհետեւ նախարարը ներկայացրեց Մխիթարյան միաբանության ծայրագույն վարդապետ հայր Վահանին ու գնահատանքի բարձր խոսքեր հղեց նրա հաստատեցին ու նրա կատարած կարեւոր ու արժեքավոր գործերին, մասնավորապես բառարաններ ստեղծման բարդ ու դժվարին գործը սանձնելու համար: Հենց այդ բառարաններով հայ-իտալական կապերը ավելի զարգացան ու երկու լեզուները մաչելի դարձան: Բառարանը վերահրատարակելու խնդրով ՀՀ սփյուռքի նախարարությունը դիմել է դեսպան Բրունո Սկապինիին, որն էլ սիրահոժար վերատպել է բառարանը, որն այսուհետ կդառնա այդ լեզուն սովորող երիտասարդության համար կարեւոր ձեռնարկ:

Դեսպանը կարեւորելով բառարանի վերահրատարակումը, որը ընդգծում է դեսպանության եւ նախարարության միջեւ եղած համագործակցությունը, նշեց. «Այն կապերը, որ մեզ կապում են, պետք է լինեն այն գործիքը, այն հիմքը, որի վրա պետք է կարողանանք էլ ավելի ամրապնդել եւ ակտիվացնել մեր համագործակցությունը: Պետք է նաեւ վերսկսենք այն երկխոսությունը, որը վերջին շրջանում նաեւ միջազգային քաղաքականության հետեւանքով որոշ չափով դադարեցվել է: Պետք է գիտակցենք պատմական պահի կարեւորությունը, որպեսզի խորացնենք մեր համագործակցության արմատները»:

Բառարանի հեղինակ հայր Վահան վրդ. Օհանյանը, որն այժմ ղեկավարում է ՀՀ-ում, Վրաստանում եւ Արեւելյան Եվրոպայում կաթողիկե համայնքը, հուզված էր, քանզի անսովոր էր, որպես հոգեւորական, նման բարձր պատվի արժանանալուն: 15 տարի առաջ Վենետիկում տպված իտալերեն-հայերեն բառարանը, երկար ու ձիգ տարիների քրտնաջան աշխատանքի արդյունքն է եւ ահա այդ բառարանը վերատպվում է: Դեռ մանկուց սերն ու կարոտը իտալական մշակույթին, երազել է մի օր թղթին հանձնել ու տարիներ անց այդ երազանքը իրականացրել է շատ նվիրյալների աջակցությամբ, մեկիկ-մեկիկ հավաքելով բոլոր բառերը:

Ջերմ խոսքեր հնչեցին բառարանը կազմողի ու վերատպության որակի համար: Իտալիայի Կաֆոսկարի համալսարանի հայերեն լեզվի դասախոս **Սոնա Հարությունյանը** բարձր գնահատեց բառարանի վերատպությունը ու նշեց, որ այն շատ կարեւոր դեր ու նշանակություն է ունեցել թարգմանություններ անելու համար, դարձել սեղանի գիրք:

Շնորհանդեսը ավարտվեց դեսպանի հետեւյալ խոսքերով. «Եթե ուզում եք երջանկացնել որեւէ իտալացու, հրավիրեք նրան դեսպան Հայաստանում»:

ՄԱԲԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

Հինգ մաչոներն Արարատից

«Հզոր զգացմունքները». հայաստանցի պարողները մտադիր են նվաճել Արեւմուտքը

1970 թվականին Լենինգրադում Ալեքսանդր Պուշկինի՝ տղամարդասական պարողներ ուսուցանող Պաոլի մահից ի վեր նրա բազկաթոռն ու ամբիոնը դատարկ էին մնացել, քանի որ աշխարհում ոչ մի տեղ չկար նրա լեգենդար հեղինակությունն ունեցող մեկը, որ կբարուկակեր նրա գործը: Կային մի քանի կարդինալներ՝ Նիկոլայ Տարասովը Մոսկվայում, Սթենլի Վիլյամսն ԱՄՆ-ում, Պետր Պետսովը Մոսկվայում եւ հիմա Շթութգարդում, սակայն նրանցից ոչ մեկը պատական լուսապսակ չուներ անթերի ճաղաս գլխին: Փոխարենը «որտեղից որ ռուս տղամարդ պարողներն են գալիս» հասկացությունը տեղափոխվեց Երեւան՝ Հայաստանի մայրաքաղաք, հայտնի իր ռադիոկայանով եւ նախկին ԽՍՀՄ-ի վերաբերյալ իր երգիծական մեկնաբանություններով: Այնտեղ չկա մի առանձին ուսուցիչ, որին պարտական լինենք քաղաքի նոր ձեռք բերված հեղինակության համար, սակայն Հայաստանի պարարվեստի ուսումնարանն է, որը դարձել է հիրավի անսակ մի աղբյուր, որն աշխարհի բալետային խմբերին ապահովում է փայլուն ուսուցված երիտասարդ տղաներ (քանի որ ես չեմ հանդիպել երեւանյան որակի կնիք ունեցող որեւէ բալետի պարուհու):

Եվրոպայում ամենից կարեւորը կարծես Շվեյցարիայի «Յուրիխ բալետն» է, որի գլխավոր մենակատարներից չորսը հայ են, իսկ հինգերորդն արդեն Յուրիխի երիտասարդական բալետի անդամ է: Նրանց գործընկերների մեջ կան գլխավոր մենակատարներ եւ մենապարողներ Բեռլինում, Մյունխենում, Համբուրգում եւ Շթութգարդում, եւ բոլորն էլ մաչո տիպի ահավոր վիրտուոզներ են. նրանց մեջ «ղզիկներ» չկան: Ի դեպ, Դավիթ Կարապետյանը Սան Ֆրանցիսկոյից, մեկ այլ երեւանցի (այս բառը բնագրով հենց այսպես էր՝ Yerevantci ծան. թարգմ.) աշխարհ է մուտք գործել նույնպես Յուրիխի ճանապարհով, որի բալետային ղեկավար Հայնց Շփյոռլին գովեստով է արտահայտվում «իր երեւանցի տղաների» մասին:

Նրանք, թվում է, ոչ միայն գործընկերներ են, այլեւ մտերիմ ընկերներ, մի մակարդակի, որը սովորական չէ եվրոպացի պարողների շրջանում, քանի որ նրանց միավորում է հատուկ հայկական որակը, եւ ոչ միայն այն պատճառով, որ նրանք բոլորն էլ ուսուցանվել են միեւնույն ծրագրով, այլ որովհետեւ նրանք միեւնույն զգացմունքներն ունեն տան հանդեպ (ներառյալ կարոտը): Իրականում նրանք խորապես հպարտ են՝ լինելով հայ, ոչ թե ռուս, եւ դա հաստատապես առնչվում է նրանց հավաքական գիտակցությանը՝ կապված իրենց ժողովրդի տառապանքների հետ երիտասարդ թուրքերի օրոք, որոնք մեկուկես միլիոն հայրենակիցների սպանեցին 1915-1916 թվականներին:

Երկու ամառ առաջ պարողներից հինգը տանը՝ Երեւանում համախմբվեցին «Գեղագիտական ռազմիկները» ներկայացմամբ՝ ստուգելու իրենց ունակությունները: Այն մեծ հաջողություն ունեցավ, ուստիեւ տղաները համարձակվեցին հայտարարել իրենց դեբյուտն Արեւմուտքում՝ «Հզոր զգացմունքներ. ժամանակային ուղեւորություն դասական եւ մոդեռն պարի միջով» վերնագրով Մյունխենի ֆիլհարմոնիայում, Տիգրան Միքայելյանի եւ ընկերների կողմից: Քանի որ Միքայելյանը Բավարական պետական բալետի մեծապես սիրված գլխավոր մենակատարն է, հասարակության հետաքրքրությունը երաշխավորված էր: Եվ հասարակությունն իսկապես հիասթափված չէր:

Երկու մասից կազմված երեկոն սկսվեց բոլոր հինգ պարողների մասնակցությամբ համարով, որը մի փոքր ներշնչված էր Բալանչինի «Սերենադից»՝ ցուցադրելու համար իրենց դասական կրթությունը: Եթե սա ապացուցեց ավելի շատ իրականություն, քան մթնոլորտի ջերմացում, երբ դասական պա-դե-դեն «Մարդուկ-Ջարդուկը», «Կարապի լիճը» եւ «Դոն Կիխոտ» բալետներից՝ մասնակցությամբ Արման Գրիգորյանի (եւ Գալինա Միխայլովայի, երկուսն էլ Յուրիխից), Վահե Մարտիրոսյանի եւ Վիկտորինա Կապիտոնովայի (նույնպես Յուրիխից), Տիգրան Միքայելյանի եւ Դարյա Սուխորուկովայի (երկուսն էլ Մյունխենից) ներկայացան որպես ստանդարտ համարներ՝ ցույց տալու իրենց բարձր հղկված դասական արհեստը, որոնցում տղամարդիկ նավարկում են օդի մեջ ինչպես բռնկված հրթիռներ, եթե չեն ներկայացնում գլխապտույտ պիրուետներ, իսկ Սուխորուկովան իր արաբեսկները կատարում է այնպիսի անխոնջությամբ, կարծես կեցվածք է ընդունում քանդակագործի համար: Եթե նրանցից մեկի վայրէջքը մի փոքր շեղվում է, այն լրջորեն չի վնասում շատ դրական տպավորությանը: Այդ «ցուցանմուշները» կապված են երկու մրցող պարողների՝ Արսեն Մեհրաբյանի եւ Արթուր Բաբաջանյանի (երկուսն էլ Յուրիխից) ինտերմեցցոյով, որոնք հստակորեն երազում են այն օրվա մասին, երբ նրանց կթույլատրեն հանդես գալ այդ գլխավոր դերերում: Երկուսն էլ հաճելի եւ գեղեցիկ, ուռուցիկ մկաններով՝ մարզված ինչ-որ հայ Շվարցենեգերի կողմից, սակայն ոչ մի հատուկ բան:

Տարբեր էր երկրորդ մասը, որ հրամցրեց որոշ պատշաճ խորեգրաֆիական նյութ եւ անսովոր գեղեցկություն, էլ չասած նրանց զգացական հմայքի մասին: Դրանց մեջ էր էլեկտրականապես լիցքավորված պա-դե-դեն Շփյոռլիի սպորտային «Գոլդբերգի վարիացիաներից» (Մարտիրոսյանի եւ Սարա Ջեյն Բրոդբեքի կատարմամբ) եւ մեծապես ամբողջական «Բավակա՛ն է» պա-դե-տրուան Շփյոռլիի «Մագնիֆիկատից» («երկխոսություն երեքի համար», որ հրաշալի ներկայացրին Գրիգորյանը, Մարտիրոսյանը եւ Կապիտոնովան): Էկրանին ցուցադրելով քաղաքի անցյալի որոշ ճարտարապետական ավերակներ եւ Երեւանը շրջապատող մի քանի բնապատկերներ՝ կախարդական Արարատ լեռան սվերում, տղաները համարձակորեն ներկայացրին իրենց ազգության աշխարհագրությունը՝ այդպիսով շեշտելով իրենց էթնիկ ծագումն առանց որեւէ ազգագրական մոտիվների: «Արշիլ Գորկու հիշողությունները» համարում, որտեղ նրանք հավաքականորեն կիսել են խորեոգրաֆիան, եւ «Ծիրանի ծառ. անցյալի հուշեր» համարում, ներշնչված մի հայկական կինոնկարից, խորապես տեղեկանում ենք այն անբուժելի վերքերի մասին, որոնցից նրանց ժողովուրդը տառապել է մոտ հարյուր տարի առաջ: Երեկոյի վերջում նրանք ցուցադրեցին մի ավելի լավատեսական կտոր, որը թերեւս նաեւ որպես մեծարումն էր Մյունխենի «տեղական ասված» Կառլ Օրֆի՝ վերջինիս «Կարմինա Բուրանայով»: Այդուհանդերձ, ես կցանկանայի, որ նրանք ավարտեին իրենց «բերանի ջուրը վազեցնող» (կամ ավելի շուտ պետք է ասել՝ «ոտքերը խտղտացնող») ծրագիրը՝ ինչ-որ բան հրամցնելով իրենց երկրից: Պատկերացրե՛ք Արարատի այս հինգ մաչոները հանդիսարահին նետեին իրենց պարային «խանձողները»՝ համեմված խաչատրյանի «Սրերով պարի» դինամիտային ուժով:

ՀՈՐՍԹ ՔՈԵԳԼԵՐ
www.tanznetz.de

Անգլերենից թարգմանեց
ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆԸ

Հայաստանի հավաքականի ռեկորդային թռիչքը

Սլովակիայի եւ Անդորրայի հավաքականների նկատմամբ տոնած համոզիչ հաղթանակների շնորհիվ ֆուտբոլի Հայաստանի ազգային հավաքականը ՖԻՖԱ-ի դասակարգման ցուցակում ռեկորդային թռիչք է գործել՝ 105-րդ տեղից տեղափոխվելով 60-րդ հորիզոնական: Սա մեր հավաքականի պատմության մեջ ռեկորդային ցուցանիշ է: Նախկինում մեր ընտրանու լավագույն արդյունքը ՖԻՖԱ-ի դասակարգման ցուցակում եղել է 2008-ի հունիսին, երբ զբաղեցրել է 78-րդ հորիզոնականը: Իսկ ամենացածր արդյունքը գրանցվել է 1994-ի հունիսին (159-րդ տեղ):

Նշենք, որ Սլովակիայի հավաքականի նկատմամբ հաղթանակը Հայաստանի ընտրանուն 1380 վարկանիշային միավոր է պարգեւել: Եվս 375 միավոր մեր ֆուտբոլիստներն իրենց վարկանիշին ավելացրել են Անդորրայի հավաքականին հաղթելու շնորհիվ: Դրա հետեւանքով մեր հավաքականը նախորդ ամսվա համեմատ միանգամից 45 հորիզոնականով առաջադիմել է: Նախկինում ամենամեծ թռիչքը եղել է 2007-ի հունիսին, երբ մայիսին զբաղեցրած 128-րդ տեղից միանգամից 48 հորիզոնականով հավաքականը բարձրացել է ու զբաղեցրել 80-րդ տեղը: Իսկ ամենակտրուկ նահանջը տեղի է ունեցել 2008-ի հուլիսին, երբ հավաքականը 78-րդ տեղից տեղափոխվել է 96-րդ հորիզոնական:

Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարում Հայաստանի հավաքականի մրցակիցներից ռուսներն ընդգրկվեցին լավագույն տասնյակում՝ եզրափակելով այն: Նախորդ ամիս ՌԴ հավաքականը 25-րդ տեղում էր: 4 հորիզոնականով նահանջել են սլովակները՝ զբաղեցնելով 20-րդ տեղը: Իռլանդիայի հավաքականը մեկ տեղով բարձրացել ու զբաղեցնում է 32-րդ հորիզոնականը: Նույնպիսի առաջընթաց է ունեցել Մակեդոնիայի ընտրանին, որն այժմ 70-րդ տեղում է: Անդորրայի հավաքականը պահպանել է իր 202-րդ տեղը:

«Արսենալի» հերթական «զոհը» «Շախտյորն» էր

Ֆուտբոլի չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարում չափազանց արդյունավետ խաղ է ցուցադրում Լոնդոնի «Արսենալը»՝ մեկը մյուսի հետեւից ջախջախելով մրցակիցներին: Առաջին տուրում Արսեն Վենգերի սաները Լոնդոնում 6-0 հաշվով ջախջախել էին պորտուգալական «Բրագային», իսկ հաջորդ խաղում հյուրընկալվելիս 3-1 հաշվով պարտության էին մատնել «Պարտիզանին»: Եվ ահա հերթը հասավ Հ խմբի առաջատարներից մեկին՝ Դոնեցկի «Շախտյորին», որին «Արսենալը» ջախջախիչ պարտության մատնեց 5-1 հաշվով: Ընդ որում 69-րդ րոպեին դաշտի տերերն արդեն 5 անպատասխան գնդակ էին խփել մրցակցի դարպասը Սոնգի, Նասրիի, Ֆաբրեգասի, Ուիլշերի եւ Շամախի հարվածներից հետո: Միայն խաղավարտից 8 րոպե առաջ էդուարդոյին հաջողվեց գրավել «Արսենալի» դարպասը:

Խաղից հետո թիմերի մարզիչները հետեւյալ կարծիքն են արտահայտել:

Արսեն Վենգեր («Արսենալ»)-Շնորհիվ մեր ֆուտբոլիստների գրագետ գործողությունների, տեխնիկական վարպետության հաջողվեց գերազանցել մրցակցին: Կիսապաշտպանական օղակն այսօր հիանալի գործեց: Այսօր մենք էինք դրության տերը, իսկ «Շախտյորը» միայն պաշտպանվում էր:

Միրչա Լուչեսկու («Շախտյոր»)-Այսօրվա պարտության համար ներում չկա: «Արսենալին» 3 նվեր մատուցեցինք. 2 անհեթեթ գոլ բաց թողեցինք գումարած 11 մ հարվածը, որ մրցավարը նշանակեց մարզասերների ճնշման տակ: 3-0 հաշվի ժամանակ արդեն ամեն ինչ վճռված էր: Իսկ մինչեւ առաջին գոլը մրցակիցը վսանգավոր որեւէ պահ չէր ստեղծել: Այժմ գլխավորը պարտությունից ճիշտ հետեւությունների հանգելն է: Հարկավոր է լավ նախապատրաստվել Դոնեցկում 2 շաբաթ հետո կայանալիք հանդիպմանը: Հուսով եմ, որ պատասխան խաղում իմ սաներն անհամեմատ համարձակ կգործեն ու վստահ կլինեն իրենց ուժերին:

Հ խմբի մյուս խաղում «Բրագան» առաջին հաղթանակը տոնեց՝ 2-0 հաշվով պարտության մատնելով «Պարտիզանին»:

«Արսենալի» պես եվրոպական մյուս հզոր ակումբները՝ Մադրիդի «Ռեալը», «Բավարիան» ու «Չելսին» առանց միավորի կորստի են ընթանում: Ե խմբում «Բավարիան» 3-2 հաշվով հաղթեց ռումինական ՉՖՌ-ին: Այդ խմբի մյուս խաղում «Ռոմայի» ֆուտբոլիստները սեփական հարկի տակ 1-3 հաշվով զիջեցին շվեյցարական «Բազելին»: Եթե «Բավարիան» գործնականում ապահովել է հաջորդ փուլի ուղեգիրը, ապա մյուս ուղեգրի համար պայքարում 3 թիմերը հավասար հնարավորություններ են պահպանում: Նրանք ունեն 3-ական միավոր:

Բ խմբում մեծ հետաքրքրությամբ էր սպասվում «Չելսիի» եւ Մոսկվայի «Սպարտակի» մրցավեճը: Մոսկվայում կայացած այդ խաղում անգլիական ակումբը հաղթեց 2-0 հաշվով շնորհիվ Ժիրկովի եւ Անելկայի խփած գոլերի: Առաջին հաղթանակը տոնեց «Մարսելը», որը Դիավարայի խփած միակ գոլի շնորհիվ պարտության մատնեց «Ժիլինային»:

Գ խմբում էլ կայացավ «Ռեալ»-«Միլան» կենտրոնական խաղը: Այս երկու թիմերը միասին 16 անգամ նվաճել են չեմպիոնների գավաթը («Ռեալ»՝ 9, «Միլան»՝ 7), 23 անգամ հանդես են եկել եզրափակիչում: Հաջողությունն այս անգամ ուղեկցեց «Ռեալին», որի հաղթանակն ապահովեցին Քրիստիանու Ռոնալդուի եւ Օզիլի խփած գոլերը: Խաղից հետո թիմերի մարզիչները հետեւյալ կարծիքն են հայտնել:

Մասիմիլիանո Ալեգրի («Միլան»)-Ֆուտբոլիստները չկատարեցին առաջադրանքը՝ անձնուրացաբար չպայքարելով հաղթանակի համար: Նրանք մի տեսակ թափթփված էին գործում, կոծ չէին խաղում: Միայն բաց թողած գոլերից հետո սկսեցին իրենց բնորոշ խաղը ցուցադրել, բայց արդեն ուշ էր: Կարծում եմ, «Ռեալն» արժանի հաղթանակ տարավ, թեեւ մենք զգալիորեն հետաքրքիր խաղանցիների խնդիրը:

Ժոզե Մոուրինյո («Ռեալ»)-Ֆուտբոլիստները հսկայածավալ աշխատանք կատարեցին եւ շատ լավ էին գործում տակտիկապես: Հերթական անգամ համոզվեցի, որ նրանց հետ միեւնույն լեզվով եմ խոսում: Կարծում եմ, 10-11 միավորը բավական է հաջորդ փուլ դուրս գալու համար: Սակայն ցանկանում եմ, որ մենք խմբում 1-ին տեղը գրավենք:

Գ խմբի մյուս խաղում հոլանդական «Այաքսը» սեփական հարկի տակ 2-1 հաշվով հաղթեց «Օսերին» ու վստակելով 4 միավոր, հավասարվեց «Միլանին»:

Ձախողված մեկնարկ

Ֆուտբոլի Հայաստանի մինչեւ 19 տարեկանների պատանեկան հավաքականը չափազանց անհաջող մեկնարկեց Լիտվայում սկսված Եվրոպայի պատանեկան առաջնության ընտրական մրցաշարի առաջին փուլում՝ 0-3 խոշոր հաշվով զիջելով Իսրայելի իր հասակակիցներին: Արդեն 2-րդ րոպեին իսրայելցիները հասան հաջողության: Կարեն Իսրայելյանի պատշգանած դարպասը գրավեց Ամիր Ագաեւը: 3 րոպե անց Միխա Դորը կրկնապատկեց հաշիվը: Խաղավարտից 5 րոպե առաջ Զեդան Ամարը խփեց 3-րդ գոլը:

Այդ խաղում Հայաստանի պատանեկան հավաքականը հանդես եկավ հետեւյալ կազմով. Կարեն Իսրայելյան, Վարազդատ Հարոյան (Խորեն Մանուչարյան, 42), Գրիգոր Հովհաննիսյան, Գրիշա Խաչատրյան, Վալտեր Պողոսյան, Նարեկ Գյոզալյան, Գագիկ Պողոսյան (Դավիթ Սուջյան, 82), Կամո Հովհաննիսյան (Խաչիկ Ավետիսյան, 74), Արգիշտի Պետրոսյան, Դավիթ Մինասյան, Վահան Այվազյան:

Այսօր հայ պատանիները կմրցեն իսպանացիների հետ, որոնք մեկնարկային խաղում 6-0 հաշվով ջախջախեցին լիտվացիներին եւ ստանձնեցին ընտրական 11-րդ խմբի առաջատարի դերը:

ՇԱԽՄԱՏ

Արոնյանն ապահովեց «Միկայի» հաղթանակը

Կանայք զիջեցին առաջատարի դիրքը

Բուլղարիայում ընթացող շախմատի Եվրոպայի ակումբային առաջնության 3-րդ տուրը տարբեր կերպ դասավորվեց «Միկայի» թիմերի համար: Եթե տղամարդիկ շարունակեցին հաղթարշավը՝ 3,5-2,5 հաշվով հաղթելով Սանկտ Պետերբուրգի շախմատի ակումբի թիմին, ապա կանայք մրցաշարում անդրանիկ պարտությունը կրեցին Թբիլիսիի «Սամայայից» (1,5-2,5):

Տղամարդկանց մրցաշարում մեծ հետաքրքրությամբ էր սպասվում երկու առաջատարների հանդիպումը, հատկապես առաջին խաղատախտակի վրա ընթացող Արոնյան-Իվանչուկ մրցավեճը: Վասիլի Իվանչուկը հիանալի մարզավիճակում է, որը նա դրսեւորեց շախմատի համաշխարհային օլիմպիադայում՝ լավագույն արդյունքը ցույց տալով առաջին խաղատախտակի վրա: Ուստի կրկնակի արժեքավոր է Լեւոն Արոնյանի հաղթանակն Իվանչուկի նկատմամբ: Հենց այդ հաղթանակն էլ ապահովեց «Միկայի» ընդհանուր հաջողությունը մրցակցի հետ մրցավեճում, քանի որ մյուս 5 պարտիաներն ավարտվեցին ոչ-ոքի: Հաշտություն կնքեցին Վլադիմիր Հակոբյանն ու Պյոտր Սվիդլերը, Գաբրիել Սարգսյանն ու Նիկիտա Վիտյուգովը, Արման Փաշիկյանն ու Սերգեյ Մովսիսյանը, Հրանտ Մելքումյանն ու Զախար Եֆիմենկոն, Տիգրան Պետրոսյանն ու Վադիմ Զվյագինցեւը:

Կարեւոր այս հաղթանակից հետո «Միկան» 13,5 միավորով 3-րդ տեղում է: Մեր թիմն ընդամենը կես միավոր է զիջում բոսնիական «Բիհացին» եւ Սարատովի «Էկոնոմիստին»: «Բիհացը» 3,5-2,5 հաշվով պարտության մատնեց նորվեգական «Չակսելսկաթին»: Նույնպիսի հաշվով «Էկոնոմիստն» առավելության հասավ Իսրայելի «Աշդոդ Էլիտեի» նկատմամբ: Այդ մրցավեճի ելքը վճռեց 6-րդ խաղատախտակի վրա հանդես եկող Միխայել Ռոիզը՝ հաղթելով Եվգենի Միրոշնիչենկոյին:

13,5 միավոր ունի նաեւ Ադրբեջանի ՍՈԿԱՐ-ը, որը 3,5-2,5 հաշվով պարտության մատնեց ուկրաինական թիմին: 4-րդ տուրում «Միկան» ուժերը կչափի առաջատարներից մեկի՝ բոսնիական «Բիհացի» հետ: Այդ թիմի կազմում անվանի շախմատիստներ չկան: Բավական է նշել, որ առաջին խաղատախտակի վրա հանդես եկող Հրվոջե Ստեւիչի անհատական վարկանիշը 2607 է: Այնպես որ «Միկան» ի զորու է հաղթելու նաեւ «Բիհացին»: «Էկոնոմիստը» կմրցի Բելգրադի BAS-ի հետ, որը եւս ունի 4 միավոր ու 3-1 հաշվով հաղթել է գերմանական USV-ին:

Թոմի Սմիթն օլիմպիական մեդալն ածուղի է հանել

1968-ի Մեխիկոյի ամառային օլիմպիադայի չեմպիոն, 66-ամյա նախկին արագավազորդ Թոմի Սմիթը որոշել է ածուղի հանել օլիմպիական ոսկե մեդալն ու մարզակոշիկները, որոնցով հաղթել է 200 մետր վազքում: Նյու Յորքում կայանալիք ածուղը կտեւի մինչեւ նոյեմբերի 4-ը: Նախկին թեթեւատլետը հրաժարվել է մեկնաբանել իր արարքը, իսկ նրա ներկայացուցիչները նշել են, որ Թոմիի համար ավելի կարեւոր է հաղթական վազքի հիշողությունը. «Թոմին աղքատ չէ, սակայն փողը նրա համար կարեւոր է: Եթե որեւէ մեկը համաձայնվի վճարել համապատասխան գումար, ապա Սմիթը կվաճառի մարզակոշիկները ու մեդալը»: Նշենք, որ նախնական գինը 250 հազար դոլար է:

1968-ի հաջողությունից հետո պատվո պատվանդանին տեղի ունեցածը իսկական սկանդալ համարվեց: Պարգեւատրումից հետո, երբ հնչեց ԱՄՆ-ի օրհներգը եւ բարձրացվեց պետական դրոշը, երկու սեւամորթ մարզիկները՝ օլիմպիական չեմպիոն Թոմի Սմիթը եւ բրոնզե մրցանակակիր Ջոն Կառլոսը ձեռքները ուրսին դնելու եւ հուզմունքով դրոշին հայացքներն ուղղելու փոխարեն բարձրացրել էին սեւ ձեռնոցով ձեռքերը՝ դրանով իրենց աջակցությունը հայտնելով ռասայական խտրականությունից տուժածներին: Օլիմպիադայի մեկնարկից կես տարի առաջ ԱՄՆ-ում սպանել էին սեւամորթների իրավունքների պաշտպանության շարժման առաջնորդ Մարտին Լյութեր Քինգին: Սմիթն ու Կառլոսը նաեւ հանել էին մարզակոշիկներն ու սեւ գուլպաներով էին կանգնել պատվո պատվանդանին՝ խորհրդանշելով ԱՄՆ-ի սեւամորթ բնակչության ծանր իրավիճակը:

Բողոքի այս ակցիան Ամերիկայում մեծ սկանդալի վերածվեց: ՄՕԿ-ն ամերիկացի Էվերի Բրենդեջիի գլխավորությամբ ԱՄՆ-ի օլիմպիական կոմիտեից պահանջեց 2 մարզիկներին անհապաղ տուն ուղարկել եւ ցմահ որակազրկել: Նրանք հեռացվեցին ԱՄՆ-ի օլիմպիական հավաքականից եւ անմիջապես մեկնեցին հայրենիք:

Էջը պատրաստեց **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

ԱԶԳ **Օրվա հետքերով**

«Սարիբեկյանի վաղաժամ մահը դաժան կոտանքներից է կամ էլ ուղղակի սպանություն». Թեսա Հոֆման

Գերմանուհի հայտնի իրավապաշտպան, «Ցեղասպանության ճանաչման հանձնախումբ» աշխատանքային խմբի ղեկավար **Թեսա Հոֆմանը** Հայաստանի քաղաքացի Մանվել Սարիբեկյանի մահվան կապակցությամբ նամակով դիմել է Կարմիր խաչի միջազգային կոմիտեի նախագահ Յակոբ Կելենբերգին:

ԶԼՄ-ներում տեղ գտած հրապարակումների հիման վրա հակիրճ ներկայացնելով հարցի էությունը՝ Հոֆմանը Կարմիր խաչի միջազգային կոմիտեի ղեկավարի ուշադրությունն է հրավիրում այն փաստին, որ «Կարմիր խաչի միջազգային կոմիտեին ու Բաքվում եւ Հայաստանում նրա ներկայացուցչություններին ուղղված Հայաստանի պաշտոնաստար անձանց եւ իրավապաշտպանների բոլոր դիմումներն ու խնդրանքներն այդպես էլ արդյունք չտվեցին: Երեք շաբաթվա ընթացքում, երբ Մանվել Սարիբեկյանը Բաքվում գերության մեջ էր, ընդհուպ վերջինիս վաղաժամ մահը, Կարմիր խաչի միջազգային կոմիտեի աշխատակիցներն, ինչպես նաեւ կազմակերպության տեղական ներկայացուցիչներն այդպես էլ չկարողացան հանդիպել նրա հետ եւ ոչ էլ կարողացան որեւէ կերպ բարելավել տղայի վիճակը»:

«Այս երիտասարդ տղայի վաղաժամ մահը դաժան կոտանքներից է, ուղղակի սպանություն», panorama.am կայքէջի փոխանցմամբ, նամակում նշել է Հոֆմանը: «Մենք կարծում ենք, որ Հարավային Կովկասում Կարմիր խաչի միջազգային կոմիտեի առաքելությունը, ինչպես նաեւ կազմակերպության կենտրոնական ղեկավարությունում մանրամասնորեն տեղյակ են ադրբեջան-հայկական երկարատեւ հակամարտությունից եւ Ադրբեջանում լայնորեն տարածված «հայատյացության» մասին: 20-րդ դարում Ադրբեջանում եւ Լեռնային Ղարաբաղում բազմիցս հայերի հանդեպ զանգվածային բնաջնջման եւ բռնությունների դեպքեր են արձանագրվել (Բաքու, 1918 թ., Շուշի, 1920 թ., Սումգայիթ, 1988 թ., Մարաղա/Ղարաբաղ, 1992 թ., Բաքու, 1990թ.,), ինչպես նաեւ մեկ անձի սպանություն ազգային պատկանելության հողի վրա (Գուրգեն Մարգարյան՝ փետրվար, 2004 թ., Բուդապեշտ)»:

Ըստ նամակի, այս համատեքստում երիտասարդ հայ տղայի գերեվարումն ու ազատազրկումն ադրբեջանական բանտում, ինչպես նաեւ նրա նկատմամբ կոտանքների կիրառման կասկածները պետք է անհապաղ անհանգստացնեին Կարմիր խաչի կազմակերպության տեղական ներկայացուցչություններին: «Մենք ակնկալում ենք Կարմիր խաչի միջազգային կոմիտեի համապատասխան արձագանքը Մանվել Սարիբեկյանի մահվան կապակցությամբ: Ավելին, մենք կցանկանայինք Կարմիր խաչի միջազգային կոմիտեից հավաստիացումներ ստանալ Մ. Սարիբեկյանի մահվան հանգամանքների վերաբերյալ լիարժեք հետաքննություն անցկացնելու պատասխանատվության մասին: Մենք նաեւ կցանկանայինք իմանալ, արդյոք դուք սատարո՞ւմ եք հետաքննության մեջ Հայաստանի Հանրապետության փորձագետների մասնակցության վերաբերյալ հայկական կողմի պահանջը», նշված է Հոֆմանի նամակում:

Ա.Հ.

Եվրոմիությունը՝ արտաքին քաղաքական ընդհանրությամբ

Եվրոխորհրդարանի քաղաքական խմբավորումները համաձայնել են հավանություն տալ արտաքին գործողության ծառայության կազմավորմանը: Եվրոմիության դիվանագիտական կորպուսը ղեկավարելու է արտաքին քաղաքականության բարձրագույն ներկայացուցիչ, բրիտանուհի Քեթրին Էշթոնը, որին քաղաքական մամուլում անվանում են նաեւ «Եվրոպական միության արտգործնախարար»:

Էշթոնը գովեստով է խոսել հիմնական քաղաքական խմբավորումների համաձայնության մասին՝ ասելով. «Դա ընձեռում է մեր հռչակած նպատակներին հասնելու հնարավորություն: Եվրոմիության յուրաքանչյուր քաղաքացուն է վերաբերում այն, ինչ մենք անում ենք արտաքին քաղաքականության, առեւտրի զարգացման եւ ահաբեկչության դեմ պայքարի բնագավառներում: Համոզված եմ, որ հենց այս ծառայությունն է կոչված զբաղվելու այդ խնդիրներով»:

Կառույցը սկսելու է աշխատել տարեվերջից: Մինչդեռ, «Ազատության» տեղեկացմամբ, Եվրոմիության նորակոչ փոքր պետություններում կա մտահոգություն, որ արտաքին գործողության ծառայությունը կարող է հայտնվել խոշոր տերությունների դիվանագետների ազդեցության տակ, քանի որ նրանք առանցքային պաշտոններ եւ կշիռ են ունենալու այդ կառույցում:

Առաջին շրջանում այդ «նորակոչ» երկրներից ընդամենը չորս ներկայացուցիչ է պաշտոններ ստանալու մոտ երեք տասնյակ հաստիք ենթադրող ծառայությունում: Հանձնակատար Մարոս Շեւչովիչն ասել է, որ այդ մտահոգությունը հաշվի է առնվել, սակայն դրա համար մի քանի տարի է պետք: «Փոխզիջումը ներառում է պայման, որ ծառայության կազմավորման հարցում անպայման տեղ կգտնի աշխարհագրական եւ գենդերային հավասարակշռության սկզբունքը: Դա կյանքի կկոչվի 2013 թվականից», ասել է հանձնակատարը:

Արտաքին գործողության ծառայության, ինչպես նաեւ այլ հաստատությունների ստեղծումը նախատեսվել է անցյալ տարվա դեկտեմբերի 1-ից ուժի մեջ մտած Եվրոմիության բարեփոխման Լիսաբոնի պայմանագրով:

Ա. ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ո՞ւմ է պատկանում Անդրեյ Ծատուրյանի Բաքվի բնակարանը

ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արմեն Հարությունյանը նամակով դիմել է Ադրբեջանի օմբուդսմեն Ելմիրա Սուլեյմանովային՝ Հայաստանում բնակվող Անդրեյ Ծատուրյանի Բաքվում գտնվող ապահովագրված տան վերադարձման կամ փոխհատուցման հարցի վերաբերյալ: ՄԻՊ գրասենյակի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժնի տեղեկացմամբ՝ նամակում ասված է. «Երեւան քաղաքի Բագրատունյաց 4-րդ նրբանցքի 21 շենքի 2-րդ բնակարանի բնակիչ Անդրեյ Ծատուրյանը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումով հայտնել է, որ իր ընտանիքը բաղկացած է չորս անձանցից՝ ինքը՝ Անդրեյ Իսակովի Ծատուրյանը (ծնված 1938 թ.), կինը՝ Նելլի Սուրենի Ծատուրյանը (1938), եւ երկու երեխաները՝ Արթուր Անդրեյի Ծատուրյանը (ծնված 1968 թ.), եւ Սուսաննա Անդրեյի Ծատուրյանը (ծնված 1971 թ.): Նշել է, որ 1988 թ. ընտանիքով լքել է Ադրբեջանի Բաքու քաղաքը՝ թողնելով այնտեղ երեխենյականոց բնակարանը եւ տան ամբողջ գույքը: Գույքը ապահովագրված է եղել 10.000 ռուբլի ապահովագրական գումարով: Դիմումին կից ներկայացնելով բնակարանի օրդերը, բնակարանի ապահովագրության վերաբերյալ վկայականը եւ 12.12.1988 թ. հաշվառման կենտրոնական բյուրոյի կողմից տրված փախստականի տեղեկանքը՝ խնդրել է պաշտպանի միջամտությունը բնակարանի վերադարձման կամ համապատասխան փոխհատուցում ստանալու հարցում: Հաշվի առնելով վերոգրյալը Ձեզ եմ ուղարկում քաղաքացի Անդրեյ Ծատուրյանի դիմումին կցված փաստաթղթերի պատճենները, խնդրում եմ հայտնել, թե օրդերում նշված բնակարանը ում անվամբ է գրանցված տվյալ պահին: Եթե այն դարձել է ուրիշի սեփականությունը, ապա ո՞ր թվականից եւ ի՞նչ իրավական հիմնավորմամբ»:

Հ. Ա.

Մեդվեդեւը կմասնակցի ՆԱՏՕ-ի գագաթաժողովին

Դովիլում (Ֆրանսիա) Ֆրանսիայի եւ Գերմանիայի ղեկավարների հետ երկօրյա բանակցությունների ավարտից հետո ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւը հայտարարել է, որ ինքը որոշել է մասնակցել նոյեմբերի 19-20-ը Լիսաբոնում կայանալիք ՆԱՏՕ-ի գագաթաժողովին: «Նյու Յորք թայմս» թերթը հաղորդում է, որ այնտեղ քննարկվելու է մասնավորապես հակահրթիռային պաշտպանության եվրոպական վահանի ստեղծմանը Ռուսաստանի մասնակցության հնարավորության հարցը:

Մեդվեդեւի որոշումը մեկնաբանելով՝ թերթը գրում է, որ դա անվտանգության բնագավառում Ռուսաստանի եւ Արեւմուտքի առավել սերտ համագործակցության որոնման հերթական նշանն է: Ըստ Մեդվեդեւի՝ իր մասնակցությունը կնպաստի ընդհանուր առմամբ Ռուսաստան-ՆԱՏՕ երկխոսության զարգացմանը:

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՖԱՇԻԶՄ

Ազգային փոքրամասնությունները Թուրքիայում ճնշվում են

Հարցազրույց Բեռլինի «Քրայ» համալսարանի պրոֆեսոր, պատմաբան Վոլֆգանգ Վիպերմանի հետ, որը զբաղվում է ֆաշիզմի, ազգայնականության հարցերով

- Ձեր կարծիքով, այսօր Թուրքիայում ապրող ազգային փոքրամասնությունները ե՞րբ դժվարություններ ունեն:

- Ազգային փոքրամասնությունները Թուրքիայում ոչ միայն «դժվարություններ» ունեն, այլեւ ճնշման տակ են գտնվում, ինչը, սակայն, տարբեր դրսեւորումներ է ստանում: Դեռեւս փոքրաթիվ հայեր ու հույներ են «միայն» խտրականության ենթարկվում: Քոխարենը քրդերն են հետապնդվում՝ կազմված PKK-ի դեմ մղվող ահաբեկչական պայքարի հետ: Վերջին շրջանում զգացվում է նաեւ թուրքական իշխանության անբարյացակամությունը հրեաների հանդեպ:

- Ինչպե՞ս կարող եք մեկնաբանել թուրքական իշխանությունների վարած քաղաքականությունը՝ կազմված Աղթամար կղզու Սուրբ Խաչ եկեղեցու հարցի հետ:

- Կոնկրետ Սուրբ Խաչի մասին չեմ կարող ասել, սակայն առավել քան ցավալի է հայկական մյուս եկեղեցիների ու գերեզմանատների վիճակը, որոնք պղծվել են եւ շարունակում են պղծվել: Այս երեւույթն արժանի է սուր քննադատության: Բացի այդ, պետք է հայերին իրավունք տալ, որ նրանք կարողանան հոգ տանել գերեզմանոցներին եւ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հարգող հուշարձաններ կառուցեն:

- Ի՞նչ եք կարծում, այսօր Թուրքիայում ակտիվանո՞ւմ են ազգայնական շարժումները, եւ արդյո՞ք դրանք Թուրքիայի իսլամականացման դրսեւորումներից են:

- Այսօրվա Թուրքիայում, քեմալականների օրինակով, մարդասյաց ու կրոնասյաց ազգայնականությունն անաստված մի միություն է կազմել նույն կրոնասյաց ու քսենոֆոբիական իսլամականության հետ: Դա դրսեւորվում է ոչ միայն քրիստոնյաների, այլեւ այլ դավանանք ունեցողների, մասնավորապես՝ հրեաների նկատմամբ, ինչն, ի դեպ, ավելի հաճախակի է դարձել: Թուրքական կառավարությունը վերջին ժամանակաշրջանում աչքի է ընկնում հակասիոնիստական ու հակասեմական անցանկալի հայտարարություններով:



- Թուրքիան ամեն կերպ ձգտում է անդամակցել Եվրամիությանը: Արդյո՞ք այս հարցերն ըստ արժանվույն դրված են Թուրքիա-ԵՄ բանակցությունների սեղանին:

- Եվրոմիությունը կարող է եւ պետք է քննադատի ազգային փոքրամասնությունների ճնշումն ու, նախեւառաջ, հակասեմականությունը Թուրքիայում, սակայն Եվրոմիությունը պետք է շարունակի Թուրքիայի հետ ԵՄ անդամակցության բանակցությունները:

ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՎԱՃԱՌՔ

Ամերիկյան դեսպանատունը կազմակերպում է գրասենյակային ու բնակարանային կահույքի, մեքենաների, համակարգիչների եւ այլ ապրանքների աճուրդային վաճառք, որը տեղի կունենա **հոկտեմբերի 23-ին** Ամերիկյան փողոց 1 հասցեում **ժամը 10-19-ը:** Ապրանքները կարող եք զննել տեղում վաճառքին նախորդող ուրբաթ օրը, հոկտեմբերի 22-ին ժամը 10-19-ը: Զննումն անվճար է:

Մանրամասն տեղեկությունների համար կարող եք այցելել www.usa.am էջի հայտարարությունների բաժինը:

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՃԱՆՈՒՅՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն, մշակվում է **ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծակ-Քար համայնքի** ոռոգման նպատակով Ծակ-Քար գետից՝ 198,0 լ/վրկ ջրառի ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2010 թ. հոկտեմբերի 28-ին, ժամը 16-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ բնապահպանության նախարարություն

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ս. թ. հոկտեմբերի 26-ին, ժամը 12-ին ՀՀ Լոռու մարզի Կուրթանի գյուղապետարանում տեղի կունենան «Սեփականավանի ՃՇՇ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված **Կուրթանի ԱԿԽ-ի** հանքավայրի շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հասարակական լսումներ:

Տեղեկությունների համար դիմել f. Երեւան, Կոմիտասի 29, հեռ. 22 02 18, 22 14 85, 22 15 68, 091 26 95 26:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ս. թ. հոկտեմբերի 27-ին, ժամը 12-ին ՀՀ Լոռու մարզի Ուռուտի գյուղապետարանում տեղի կունենան «Վանդոլերիս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված **Ուռուտի ավազակոպճային** հանքավայրի շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հասարակական լսումներ:

Տեղեկությունների համար դիմել f. Երեւան, Կոմիտասի 29, հեռ. 22 02 18, 22 14 85, 22 15 68:

www. azg.am

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 20.10.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տաղան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: